Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Lün
245

1 9 99

# ՁԱՅՆ

ԼԷՕՆԻ
ԳՐԱԴ. ...

## Բառբառոյ Հայաստանի Վանեց-ւոյն առ ամենայն Հայս

Ն· ԱՌԱԽԵՂԵԱՆՑ

*Զգուշութիւնն է մայր բարեաց*
*Անզգուշութիւն ծնող չարեաց·*
ՄԱԻՇԷ Գ.

Гос. библиотека Арм. ССР им. А. Мясникяна

ԹԻՖԼԻՍ

Տպարան Համբ. Էնֆիաճեանցի եւ ընկ.

1878

Дозволено цензурою. Тифлисъ. 2 сентября 1878 г.

Հզ. 249

4245-60

ՈՎ ՈՐ ԳՈՐԾՈՂ Է՝ ՆՈՐԱՆ Է ԽՕՍՔԻ ԿԱՐՔԸ,

ԵԹԷ ՈՉ՝ ՉԶՈՒՍԱՆՔ ԱՆԻՄԱՍՏ ԵՆ ՆՈՐԱ ԽՕՍՔԸ։

## Ա.

*Հասարակաց գործոյ մասին՞ մեր խօսք՞ կլինայ մէկին չը-վերաւորել։ Այժ եթէ խնկապէս խօսողներ կուզեն որ իրենց ասածն իրականանայ և ոչ թէ օդի մէջ մնալ։ Նոյնպէս թէ ի սրտէ ցանկութիւն կայ որ շատեր լինեն հասարակաց կամ Հայրենիքի պահանջ պարտքերը կատարող։ Այնպիսիք ինչ որ խօսքով կըկամին ուսուցանել այլոց անելու. Նախապէս պարտին իրենց գործերի արդիւնք հասարակաց ցուցնել և ոչ թէ հրաչք։ Չկայ մէկ որ համոզուած չլինի թէ գործի սկիզբն խորհուրդ և խօսք չէ։ Բայց խօսքի ժամանակ՞ այլէ գործին այլ՝ գործոյ արժանիք խօսողին չի՝ վերաբերեր, քանի որ ինքն խօսելուց յետոյ գործակցութիւն՞ չունենար կամ կըմերժէ իր վերայէն առնելով թէ, ես կըխօսիմ ուրիշներ թող գործեն։ Ընել է որ այն անձը խօսել միայն իր բաժին ընտրած է հասարակաց գործի մէջ. բայց հասարակութեան սիրելի է կամ ոչնչ արժանիք, զաել իւր ինքնասիրութիւն գլուէ։ Այսպիսին երևակայական է. զի հասարակութիւն շատ խօսքի չի համակրեր և երկար ժամանակ խօսելու նիւթն անփոխարէ կըլինի. Ներքոյ գործոյ ասպարէզ մտնողն գործոյ ընթացքից աւելի պէտք և միջոց է տեսնում։*

*Որեմն երբ պարտք կատարուի և կարելին գործուի, թերթերով տարածուած արևստական խօսքեր մութի մէջ չեն մնում, այն ատեն թէ գործի հետևանքները աւելի բաղմակող-*

մանի տեսանելի կըլինին իրականութեամբ և թէ թմրած ան-տարբերներ կսթափուին անձնասիրութենէն, եթէ ոչ՝ միջոցներ ամաչեցնելով նոցա, ինչպէս որ է մարդկային պատիւ անշուշտ կպարտաւորացնէ բարի նախանձի ենթարկուելուն, որով յառաջադիմութեան ձգտում կըբացուի մրցելու։ Ազգերի յառաջադիմութեան առաջին քայլ, այս տեսակէտից սկսել և շուտով պտղատու եղած են։ Տարակոյս չկայ որ այս տեսակ հասարակային մրցում կամ պարտքը կատարելու ձգտում եռանդոտ առաջնորդացողներն են. իրենց վերայ ընդունած, որք ամէն ազգի մէջ զգալուն մասից կըկազմուին։ Զգալուն մաս ասելով պարզապէս խորհողներ, խօսողներ, գրողներ և ոգևորեալ ցանկութեամբ գործի ասպարէզ սիրողները կերևին։ Հարկաւ սոցանից իւրաքանչիւր իր կարեաց համեմատ երբ սկսի մի գործի ձեռնարկելու, անշուշտ նա լաւ պիտի ուշադիր լինի, թէ իւր ստանձնած գործը հասարակաց կամ ազգին հայրենիքին կընպաստէ՞ թէ ոչ։ Այստեղ՝ ոչթէ իւր անձին կամ քանիսը անցերէ բաղկացած գերդաստանի գործին ձեռնարկելունպէս պիտի խորհի, այլ շատ տարօրինակ ուշադրութեամբ, զի շատեր մի անձական գործի նկատմամբ երկար քննադատութիւն կանեն, դրամագլխոյ քանակութիւն գործոյ պարագայից բաղդատութեամբ, մինչև որ բաւականին շարահուսեն տեսութեամբը, չեն փութար այն գործին ձեռնարկելու։ Մի անձնական գործի համար, որոյ շահեմեան միայն մէկին կպատկանի այնչափ խորհելու պէտք ունի, ապա քանիցս աւելի լրջմտութեամբ խորհելու պարտք ունիմք, միլիոններ և պատմական ամենաթանգ Հայրենիքիմը գործոյ շահեմեան։ Սորա որևէ արգասիքը օրհկան չեն. այլ պատմական և դարերի քննադատութիւն մեր օրով յաջորդ սերնդեան կյանձնիմք։ Այսպիսի անձնավէհ՝ գործ խիղճ ունեցողին կարսեցնէ, և զգուշութեամբ գործի ասպարէզ կմտէ, իսկ ընդհակառակն կամ գործի մէջը նոր վարժուելու ցանկութիւն ունեցողները՝ այս տեսակէտից աչքերնին կըկոծեն և չգիտեն որ իրենք իրենց դատապարտող կլինին ներկայիս ապագային թողնելով։ Ճշմարիտ խիստ մեղադրելի են այնպիսիք և իրենց անձի դատապարտութեան իսկ պատճառ,



որ իրենց չեն կշռում այնպիսի մի գործի համար և կամ թէ գիտամբ այսպիսի մի գործ վեր առնելով իրենց անձնական որ և է նկատմունքին ծառայեցնելու։

Ժողովրդականութիւն անշուշտ այնպիսիք տրուած կըհամարէ երբ իրանք իրանց փորձառութեամբ կշռած են [illegible]-հիս նեղ և լայն շրջան, թէ անձնական գործերի և թէ ազգային գործերի մէջ. և ատոնժամաբար բարձրանալով [illegible] փորձեր ցոյց տուած են, որով և ինքեանք [illegible] տանելու ինքնավստահութիւն ունեն կամ թէ [illegible] տուած է նոցա համակրելի վստահութիւնն իրանց շատ անգամի փորձերով, որք վերջէն իրենց խղճմտանդարտութեամբ յանձնառու կլինին ըստ կարեաց գործը կատարելու։ Անտարակոյս ով որ մէկ ցեղի հասարակային գործ յանձն կառնէ կատարելու, նա պարտի գիտենալ այն ազգի ցեղական պատմութիւն, նորա ժողովրդական ներկայ կեանք կամ հպատակութեամբ բաժանեալ մեծամասնութեան դրութիւն, փոքրամասնութեան վիճակ և այլ սոցա հետևեալ պարագաները։ Սոքա բաւականաչափ չեն, այլ քաջ գիտենալ նոյն ազգային ընդհանուր շահերի և վնասների սկզբնական կէտերը, որով համեմատութեամբ իւր սկսած գործին, կարող լինի տեսնել իւր կատարած գործից գալիք յաջողութեան հետևանք, և ի նկատի ունենայ թէ ծագած վնասների ձախորդ յաջորդութիւնք մինչև ո՛ր աստիճան պիտի ներգործեն ներկայ և ապագայ յաջողութեանց վերայ։ Այս տեսակ ծանօթութիւնք չունեցողներ, ինչ էլ որ գործեն նոցա գործին չէ կարելի գործ ասել, այլ վտանգ և խիղճով գործողներին խոչնդոտ, զի թէոր առողջ և լուրջ մտքով նկատենք բաղմակողմանի բաղդատութեամբ աւելի վտանգաւոր կըգտնենք քան օգտակար, և եթէ պատահի մէկ, որ զգուշացնէ մի ամենակարճատես խմբագրի կամ բառագէտ նամակագրի, նոքա առանց մտածելու ետ ու առաջն կարհամարհեն. չնայելով որ փորձեր են կազդեն իրենց վտանգաւորութիւնը, բայց զինքեանք շրջապատող զանազան նկատմունքի համար դրթնային գովեստներուն միայն կլսեն, մինչև խորխորատ գլորուելն անգամ, եթէ ամէն ոք միայն խօսքի չլսի՝ գործի արդիւնք փըն-

տալ կարող է գտնել և մատնանիշ անել ինքնասիրութիւնից հրապարակ իջնողներին։ Այսպիսիք են ազգամիւսն քան օտարին, այսպիսիք՝ ոչ միայն կը դաւաճանեն իրենց գործի արժանիք, այլ անգին ժամեր և անդառնալի րոպէներ ծախսելէն յետոյ, կյաջողեն բեռնաւորել ապագայ ազգի առաջը, անձ այսպիսեաց կարօտաբեր ինքնախաբէութեամբ կը կորսուի ազգիս նուիրական ծառայողների ուղղութիւն և պատմական Հայրենիքի բաղձանք, ոմանց մնափառութեան կամ անձնական հաջողքներ կատարելուն պատճառաւ։ Այս մասին ժողովուրդ մեղաւոր չլինելու համար՝ որչափ զգուշութիւն պիտի մտածել և հսկել՝ որ իր պարզէն պաշտպանւած ամենաթանդ իր աւունքն չենթարկուի զառի մոլթիմների և արեստիւ խօսողներու գործիչներ՝ տակ։ ժողովրդեան արժանիք իր գործիչներն են։ Եւ եթէ շատ անգամեան փոփոխուած արժանաւորն ևս լինի ընտրած որևիցէ պաշտօնի մէջը, դարձեալ մեծ պարտք կայ նորան հսկող լինել, որպէս մեր անձնական-գործեր անհրաժեշտ է հսկել, բայց երկպառակութեանց վախենալու ենք, որովհետև մենք այն գիւքն ունենք՝ որ երկպառակութեան դէմ երաշխաւորելու յոյս չունենք։ Երբ ժողովուրդ մինչև փորձուածն մեջտ հսկողութեան ունենալ պարտաւոր է, այն որքան պարտքերնիս աւելի է մեր ազգային ամէն աստիճանի գործիչների արժանիքին համեմատ աստիճանաբար գործը յանձնել և գործողութեան ասպարիզին չափ տալ։ Բայց ընդհակառակն է այս տեսակ ուղղութիւն մեզ մէջ շատ անգամ, միթէ քիչ փորձեր ունիմք մեզ մէջը, չըչափելի մեր ամենիս առաջ, ով չգիտէ գլխաւոր պատճառը... և սորա համար է որ մենք ատացինք զգուշութիւն երկպառակութիւնից, բայց երկպառակողների խղճին և ճանաչման ինչ է եղած որ իրենց տնակոխութեան չեն զգուշանայ, իրաւ գաղիական ազգ ըրաւ (րէոլիւսիոն) բայց տուաւ այնքան փող այնքան զոհը և այլ նոյնանման ազգեր։ Նոքա հաստատ բնակութեան երկիր ունին կենդրոնացած և իշխանական հզօր զօրութիւնք։ Պարոն մի բան էլ ասեմ, որ րէոլիւսիօն բառ մեր չէ, նա տուր տիրոջ, տես քեզ վերայ և քո աչքերից տեսնալու ինչ կմնայ,



մերկ մոխր Հայաստանի ժողովրդեան մէջ, նորա կարկատած չորերից և բնական կեանքից առ քո անելքն։ Բայց ցաւիսիրտ որ շատեր և գլխաւորապէս մի մշակ, օտար կեանքի ծանօթութեամբ և իւր սեննկի ճաշակով կչափեն Հայն և Հայաստան և ազգային գործերըն։ Զարմանք՝ միթէ տեսանելի չեն որք երկու բառ. իրար կպցնել գիտցողներ կամ հորմէն վաստկուած երկու ու կէս մանեթի կարողութիւն ունեցողները հրապարակախօս կամ ազգային գործի խմորներով շաղաղուած են.....։ Թէև մի մասամբ սոքա ազգասիրութեննէն դրդուած ևս լինէին, այսու ամենայնիւ դեռ անպտուղ գործ են և նորից սկսած, առանց արդիւնքի սպասելուն ժողովրդականութիւն կուտայ շատ անգամ սոցա ունեցած արժանիքէն աւելի յարգանք և պատիւ. սա այն հետևանքն ունի՝ որ լաւն ու վատ միևնոյն կլինին, եթէ մենք կաշխատենք լաւերն շատացնելու միջոցներ աւելացնել, ապա ուրեմն մեր աչքի առաջ ունենանք լաւ ու վատ չզատելու հետևանք, և չթողունք միջոց նոր մարդկութեան շրջանի անցնողներին կամ կարճատեսներին որ յափշտակուլին գնոսա դիւրաւ ընդունելու։ Թէպէտև յարատևական չեն այսպիսեաց ընդունելութիւն՝ նոյն և ընդունողները օրիկան են։ Այնու ամենայնիւ ժամանակի կորուստ թանգ է և անփորձին իր աստիճանից կամ զօրութիւնից վեր մի բան տոււած կլինիմք, սոցա կորուստ պարզ է։ Եւ եթէ այս ասածներ անփորձներին վիշտ է, ես կըխնդրեմ, չհամարել, եթէ ոչ, մենք դեռ ևս կյաւելումք ասել, թէ որ անփորձները խղճիւ հրապարակ իջած են ազգին գործ տեսնելու կամ բուն ազգասիրական պարտքով և ոչ իրանց կոպեկ կամ երկու բառագիտութիւն զօրաւոր առարկայ բռնելով։ Այնպիսիք՝ նախ քան գործի սկըսելըն, պիտի իրանց արժանիք տեսնեն և քննեն, ոչ թէ փողից կամ բառագիտութիւնից կրակուած, անարժան բաժին լինին և լինելու ենթարկեն ուրիշներին։ Այնպիսիք թող խնայեն վերջին ամօթանք և առաջուց տեսնելու աչք բանան իրենց որ աստիճանի գործաղ խումբից սկսելու լինելն տեսնեն, այն դասին հետևելով աստիճանաբար թէ առաջ կըգնան և թէ յառաջադիմութեան հետ իրանց զարգացումն ես ցուցնել կուտայ բատ-

րին գործերից մինչև ամենաբարձր լաւ տեսնել և գործել։ Ապա ինչ, կարելի է՝ այս ինչ կամ այն ինչ համալսարան ուսանողն միևնոյն կերպով սնած լինի մի այլ երկրի մէջը, Հայաստանի և հայկական ազգի գործերից բոլորովին հեռու և անծանօթ. նա մէկէն ձգտի դատելու բազմատառապեալ Հայ ժողովրդեան ներկայ վիճակին և ապագային վճիռ տալու։ Իրանց որ հարցնեմք՝ ուղիղ լինել կխոստովանեին կամ ունեին իրաւունք, ուշիմ ընթեցող դու հարցրու այնպիսիներին։ Զանեմք Աստուածային օրէնքի վրէժխնդրութիւն, այլ բնութեան պահանջները, որք մեր ամէն դասի անձանց վերայ ներգործող են ամէն մասի մէջը, օրինակ դեռ կաթնկեր կաթէց իւր զարգացում չառած նորան ամենափափուկ ուտելիքը մահ է, նոյնպէս և հասակաւորներիս եթէ հացի պահանջի տեղ ջուր լցնեմք մեր ստամոքսի մէջը և այլ սոցա նման հակառակ կատարենք մեր բնութեան պահանջները, ուշ թէ շուտ մեզ ցաւոց տեսակներով մահուան կուտամք։ Ապա պ. անփորձներ և ապագային հասունացողները՝ մենք ինչ կանեմք առանց մեր ժամանակին և միջոցին սպասելու։ Հայկական ժողովուրդներին ինձ՝ որ կյանդգնիմ հարցմը ևս անել մեր ամէն աստիճանի Հայերիս։ Հայոց ժողովուրդ և ազգ բազմաչարչար, մինթէ բաւ չեն մեր զարհուր փորձեր և դեռ ազգային հաւատ արժան և անյարք տալ սրան նորան։ Արժէ որ և է անարժան պաշտօնեաներին կամ հրապարակախօսներին, մանաւանդ որ մանուկ խելքի ենթարկւողներից լինեն... Ո՞ ձեզ և ձեր խղճին ինչ տեսակ անզգայութիւն պատուաստուած է, ով ներգործողները, թէպէտ ազգը և Հայ ժողովուրդը պաշտելի հաւատ ունի և շատ ուշադիր է իւր ազգային գոյութեան համար, թող արժան տալ գիտեցած լինի։ Բայց մեզ ինչ է եղած որ առանց մեր արժնիք կշռելու ինչ որ ապարեղ գտնեմք դայն մեր մանուկ խելքով գործելու վազեմք և նորա մէջ առաջը գնացողների դէմ կորելու չափ առանց աջ ու ահեակ մտիկ տալու, փող չունեցող կամ երկու բառ կպցնել չգիտցող՝ մինթէ մեր գործերին իրենց փորձառութեամբ առաջնորդող չեն լինի և պէտքի տեղ չունեին։ Մենք այսպիսով մեր արժանաւորներ և փորձառուներ չենք ճանաչ-



խուսում այլ մեզ, թողունք այս որ աւելի ընթերցասիրելու հատորների կարօտ ենք։ Այլ և չպէտք է զգանք (աւելի հոգևորականք) սարսափելի վտանգէն, որ մեր խակ և յամառ գործելով, Հայկական անսպառելի ժողովրդեան աղբիւր կը փակենք մեր և ապագայ գործողների առաջը։ Ինչպէս երկու տարուան շրջանս ինձ խիստ շատերից լսել տուաւ, ասանք անենք, բայց մինչև այսօր մեր գործողներին տուածից ինչ արդիւնաւոր գործ տեսանք... եթէ ոչ ամէն բանով բաց է մեր տուրք և տուելիքները ազգի համար» Արդարացի և շատ պէտք է այս պահանջ ժողովրդեան կողմանէն, առաւելապէս առ հոգևորական իշխանութիւն։ Վերջապէս Հայոց անհատներից միացած ժողովրդական դասեր՝ պարտաւորցուցին ինձ այս շարունակութիւն զգացմունքէս դուրս արտայայտելու հրապարակ և ակնարկմը էլ ձգել գործիչների վերայ տեսածիս համեմատ։

## Բ

Ռուսիոյ Հայոց ազգային, գործնէ հոգևորական ընտրութիւն և ուսումնարանական գործը։ Տարաբախտաբար այս վերջինից որ Հայ ազգը իւր լուսաւորութեան անզօրր ապագայի հասնել կ'յուսայ, այն ալ շատ տեղ անձնական վէճերի ենթարկուած են, մինչև անգամ էջմիածնի ճեմարան այս տարի ծխական ուսումնարանների վէճերով փոփոխութեան ենթարկուեցաւ, փոխանակ ծխականները անկէ օրինակ առնելու, կեդրոնականը օրինակւեցաւ և նմանեցաւ նոցա դրութեան.....։
Իսկ հոգևորական ընտրութիւն այն ուղղութեան համեմատ չէ գործադրւում, որպէս ժողովրդի շահը կպահանջի, այլ ով որ փող ունի կամ նօթայ գիտցեր է նա է քահանայ կամ վարդապետ, առաջնորդական ընտրութիւն ինչպէս որ լինի։

Ռուսիոյ Հայոց մէջը Ազգային կեանքի մասին կան խորհող՝ գրող՝ և խօսող դասը երիտասարդութիւնը. որոնց գլուխ անցած են խմբագիրները և հեղինակները։ Արդէն հրապարակային հինգ թերթ ունէին, նաև անցեալ յուլիսին դուրս եկաւ մանկավարժական ամսաթերթմը, որոյ ի լոյս գալուն ուրախութեամբ կ'ողջունեմք և կ'ցանկամք յաջողութիւն։

***

«Արարատ,» ամսաթերթ լաւ բաժանորդաց անուն թուել կը շարի և իւրաքանչիւր քահանային անհրաժեշտ տալ 4 ռուբլին, կստանձայ, կարդալու հաւաս ունի թէ չունի կամ կարդալ գիտէ-ցերէ դա գիտնալու դեռ շուտ է, այս տեսակ երկար տեւու-թիւն որ անի հարկաւ անցեալ և հնութեան թմրութիւնը շուտ կ'փարատի, ուստի նա հին կ'գործէ և հին դարոյ պահանջներ-ով պիտի բերի շատ բան.....

***

«Հայկական Աշխարհն» ամսաթերթ է թէ եռամսեայ դա խմբագիր գիտէ. բարունակութիւն ինքնագով յաջողութիւնը ունի, որոյ պ. «մշակի» խմբագիր հագիւ այս տարի հասաւ և ալ-ռվ գիտէ ովքեր պիտի գան դուրս երոպայից։ Այսպիսի թերթին Հայաստանի առածն տանք (չէն անուն վէր ավեր քաղքին)։

***

«Մեղու թերթը որ երկար տարի է կ'շարունակուի, առա-ջին է իւր սկսուած օրէն, ինչպէս ժողովրդական դասի համակ-րութիւն կ'ցուցնէ կարելի արժանաւոր փորձ տուած է ազգին իւր գործնէութեամբ ժամանակի հետ։ Բայց Թուրքիոյ Հայոց խնդրոյն նկատմամբ այնքան գործը չունեցաւ այս արեւելեան հարցիս, բացի քանիմը նշանաւոր թարգմանութիւններ էն, և ազ-գային կարճառօտ խորհրդածութիւններէն, աւելի լաւն առնք սահմանափակ վարվեցաւ մինչև վերջերս այս հարցի մասին։ Բայց ով կարող է չտեսնել այս ուղղութեան մէջ որքան որ է ունեցած սիրտ և արիութիւն։ Արդէն խիստ կ'պահանջէ ին պա-րագաները որ յարծակող խստապահանջիմը դէմ հաւասար-ութիւն պահպանելու համար մեղմ եւ լինել. բայց ոչ միջոց թողուլ անփորձներին...,

***

«փորձ» եռամսեայ թերթի խմբագիր և իւր շուրջ գտնուած հեղինակները նոյնպէս ժամանակի գնահատող մի նշանաւոր գործ չունեցան ստիպող կէտերին։ Իսկ նորա ազնիւ զգացմանց ար-



տայատութիւնները որ ազգային ապագայի տեսութեամբ և թարգ-մանութեամբ երիտասարդութեան կ'նուիրէ. առանձին նշանա-կութեան արժանիէ երիտասարդաց, լաւ ուշք դարձնեմք այն տարոյս զարգացման առաջնորդող փորձի հատորներու բո-վանդակութեանն, մանաւանդ 77—78 թուականի հատորները, մենք էլ կասենք որ խիստ հարկաւոր է Հայերիս օրինակուել՝ օտար երիտասարդութիւնից։ Այս խմբագրութիւն նաև դուրս բերեց վերջերս ազատ երգերի տետրակմը՝ (դամառ. գաթիպայի) աշխա-տութեամբ, որն որ կ'վկայէ գիւղերի համար դարոյս պա-հանջելի արժանաւոր անձինք լինել։ Բայց թող ընթերցող չը կարծէ որ մենք ա ր ժ ա ն ա ւ ո ր խօսքը միայն գիւղերին կամ այլ մէկիմը տալ կ'կամենք. որն որ մեր կողմանէն յանդգնու-թիւն կ'լինէր անձնաւորութիւնների արժանիքը գնահատել և թէ հասարակաց գործի այլ միջոցներով աշխատողներ վիրաւորել, այս անզգուշ վարմանց կորուստ խիստ զգալի են մեզ և չեն թոյլատրեր մեր ճանաչման որ աջ ու ահեկի արժէք տանակո-խենք, որպէս մի շատ հասկացող Թուրքիացի՝ անցեալ տարի տեղացնումէր «մշակ» թերթով մ ա ր դ չ՛կ ա յ մարդ չկայ, և որ-քան անգամ ասուեցաւ «մշակ» խմբագրից ո ւ ր ի շ չ կ ա ր և չ կ ա յ...։ Այս տեսակ գրեթնային վարվողութիւն կարճատեսութեան տրգասիք կասենք. կամ անձնասէր հայասերիմը պարզ և անծա-նօթ եղբայրասէրների սրտին նսեմել, այս որքան արդար նը-կատմունքով էլ լինի՝ ինքն ըստ ինքեան սարսափելի է իւր հետեւանքներով։

***

«Մշակի» պ. խմբագիր արդէն արեւելեան խնդրոյ մասին իւր գրուածներով առաջընթաց եղած էր և հրապարակ իջած 76 թուէն մինչև ցայսօր, և իբրև գործող Թուրքիոյ Հայոց խնդրոյն ցոյց տուածէ ինքզինքն։ Այս առթիւ բոլոր գործողները յոյս նորան կապելով ջերմ համակրած էին ամեն կողմէն. նոյնպէս գիմա-ծ էին նորան այս խնդրով ոգեւորուած շատ նամակգիրները, որք անսպասելի դուրս եկան ազգիս մէջէն զանազան կողմերից, որոնք բաւականին արժանի էին այն կետին գլ իրենց ազգային

ջերմ զգացմունքներով և քաղաքական տեսութիւններով կրթութեան առաջնորդ դառնալ ներկայ և ապագայ գործողներուն։ Սոյն շարքում աւելի ուշադրութեան արժանի էր պ. Խնուսի ստորագրութեամբ գրուածները. բայց սակայն միջոցին եա մնացին և փախագողներն էլ գրկուեցին։ Ժողովուրդ երբեք ազնիւ աշխատութեան յարգանք և ոչ մէկի անուն չի մոռանար, սակայն չ'գիտցաւ թէ այն յօդուածագիրները նպատակ ինչու չը պսակուեցաւ և ինչու օգուտ չ'քաղեցին նոքա իրենց բաղձանքին համեմատ։ Թող ներէ մեզ հարցնելու իրեն ամէն պ. խմբագիր, թէ ինչ եղաւ այնքան գրուածք կամ իր գործունէութեան արդիւնքը՝ որոնց և ոչ մէկ գործի նորմանութիւն չունեցաւ, այնպէս ինչպէս կը խօսուէր հրապարակ և ոչ էլ լաւ հետեւանք կամ արդիւնք ունեցող երեւեցաւ։

Ընդհանուրի խրատամբ՝ ժողովուրդ պարտաւոր է աշխատողին գործունէութեան հաշիւ առնել, նոյնպէս պարտաւոր է գործողն գործի արդիւնք յայտնել, ոչ թէ պատճառաբանութիւն առանց զօրաւոր փաստի։ Ուստի ինչպէս ժողովրդեանը անհատ՝ պիտի իրաւացի համարուի թէ ոչ, այս մասին հարցեր անել մեր կողմանէն, ուրիշներ որպէս կ'գտնեն չ'գիտեմ. (պ. խմբագիր ինչպիսի ասի գիտեմ.) բայց իմ խիղճս և ազգային պարտքս կ'ստիպէ զիս խօսելու։ Մանաւանդ որ Հայաստանի Վ. քաղաքէն եմ։ Եւ ինչպէս մշակի խմբագրութեան ծանօթ որ 76 թուին ըստ իւր ցանկութեան Հայաստան ուղարկուած առաքեալ մը կ ա ր վերջէն հասաւ մեզ մօտ։ Թէ նորա յուսադրութիւնը եթէ Վանի գիւղուածն սովալեցին մեզ համար 77 փետրրվարի ընկղըն Տփխիս։ Երբ ի չեռնեցինք պ... Առամ. պրումի սենեակ կամ յաճախելով խմբագրութեան սենեակը, չ'գտի այն առաքեալի պատմածին համեմատ մի աննշան մասն որ դարձեալ կ'բաւականացնէր այն ամեն տեսակ սառնութեամբ լըցուած ճանապարհորդութիւնս.......։ Ի՞նչ կասեմ... Երանի թէ բոլորովին ոչ ինչ գտնէի և չէ թէ իմ Հայրենակցաց թշուառութիւն բերող անհեռատեսութիւն........։ անհեռատեսութիւն եղիմարութիւն ի միասին միաբանած.....։

Վերջապէս յայտնուեցաւ այս տարի չ'չափելի գործը, որ



երեւեցաւ ամենեցուն, այն էր «մ շ ա կ» թերթի ամենօրեայ լինել արեւելեան հարցի պատճառաւ և Թուրքիոյ Հայոց հարցի մասին ռուսիոյ Հայք յետաքրքրուեցան տեսնել այս օրաթերթը և լինել ընթերցասէր։ Ոչ ընթերցող և ոչ յօդուածագիրներ այսպէս լինել կ'յուսային։ Բայց պ. խմբագրի բուն նպատակն այս էր եղած՝ եթէ ոչ ապա ինչու ինք զինքն այս մասին փառաւոր կ'համարէր և իւր թերթի տարածողներուն գովեստներ կ'անղացնէր, իսկ յօդուածագիրները ոչինչ շնորհակալութեան արժանացած չեն. մանաւանդ որ իւր թերթին բաժանորդ չէր գրուած, և գիտէ որ առաջիկայ տարի այն ընդունելութիւն չունենալ վիճակահանութեան կարգով կ'փութայ.... Այս տեսակ բաղձանք թէև ամենքն կրնան ունենալ իրենց գործոյ մասին և օգտակարութիւն կունենար իւր նշանակութեան մէջը եթէ պ. խմբագիր շրջահայեաց լինէր իւր գրուածների և ասածների մէջ կամ գիտենար ազգային պահանջներ։ Թէ որ սորա օգուտ կամ վնասն առ մասնաւոր մը վերաբերէր՝ դարձեալ զգուշութեան կէտեր կային։ Այս առթիւ «մշակ» խմբագրի ուղղութիւն ի նկատի ունեցած, հասարակութեանն կ'հաղորդեմք հետեւեալ փաստերով և ասածներով, թողնելով ընթերցողի քննադատութեանը։

Եթէ իրօք նա ազգասէր էր կամ կուզէր անկեղծութեամբ ազգային գործ առաջ տանել և ոչ սնափառութիւն. նա նախապէս մեր ցրուեալ Հայերի միջոցներ պիտի իմաստասիրէր, երկրորդ նա ինքզինքն լաւ կշռած պիտի լինէր թէ կարող էր մի այնպիսի ընդհանրական գործը մինչև աւարտ բերել, առանց այլոց աւելի թալու նմա խոչընդոտ կամ վնասաբեր լինելու, կամ թէ ուրիշներ իւր գործնէութեան չ'համակրելով չեն կամենայ գործակցելու, թէև շատ էլ իրանց սիրելի լինէր այն աշխատութիւնը։ Այս և սոցա նման անտանման դժուարութիւններ եթէ իւր գործունէութեան առաջ հալեցնելուն թողեց, շատ բարի՝ և եթէ ազգասիրական մրցում յառաջ մղեց, և ոչ մէկին մոլի չը տալու, պաշտելի ձգտում։ Սոքա եթէ հաստատութեան կարօտ էին, այնէր ունենալ խոհականութիւն և այլ պէտքական միջոցներ։ Ուրեմն ըստ ամենայնի պարտաւոր էր իւր գրուածներ խորին տեսութեամբ քննադատել թէ այն գրուածներ Հայ և

օտար ընթերցողներին ինչ զանազան մտքերի պիտի ենթարկէին, կամ որպէս հնարաւոր էր մի եղբայրասիրական միութիւն կազմել։ Զի ընդհանրական գործ ընդհանրական գործակցութեամբ եղած է միշտ և կ'լինէր՝ եթէ լինէին չէր կարող տեսնել ամեն կողմը, գէթ պատմութիւններէն ունենար տեղեկութիւն և կազմէր ծրագիր, որով ինքն էլ պիտի հաւատար որ յաջող միջոցներին հասնելու համար, նախ հարկաւոր էր ազգային հոգևորական բարձր պաշտօնեաներ էն մինչև մոնթեր համակրելու խելք գտնելու էր, քանի որ մեր ժողովուրդ եթէ ազգ կ'ճանչցուի եկեղեցիովն է մեծ մասամբ և մեծամասութիւն նորան կ'լսի, նորա գործակցութեան հետեւողն է, այս դաս չէր որ դարձեալ ներկայիս մեծ դեր կատարեց,—պէտք է մենք մինչև վերջ նոցա ուժ տանք՝ որ տանեն և հասցնեն ուրիշ մի նոր բարենորոգութեան, նորէն ազատենք կրկնակի բեռից և թէ որ իրանք կամենան կամ ազգ ցանկանայ։ Մէկ խօսքով՝ ազգի ամէն կարօտութեան չխնայող հարուստներ, բժիշկներ, պրոֆէսօրներ եւ զինորականներ (ունեցած էր ազգ՝ բաւականին) և առ հասարակ ամեն աստիճանի Հայոց գործակցութիւնը ազգային ցանկութիւնների հետ միացնելով և գործողութեան նպատակ ճշտելով պիտի գործասիրէր։ Բայց նա ընդհակառակ հեռացրուց անորչափ բանով արեւելեան հարցի պատճառաւ իր չքմեղանք հեռաւորներ և մօտաւորներին, որոնց հանճարի և հասուն հեռատեսութեանց ազգ կարօտ էր։ Յետ այսօրիկ ըստ ամենայնի կանխատես պիտի լինէր օտարներէն գալիք վտանգներուն, ինչպէս տեղի ունեցան վանեցոց կրակի ճարակ լինել. Բայազետի Հոխպակի և Վաղարշակերտի կողոպտուիլ կամ կոտորուիլ։

Ընթերցող դատիր, զի ով է տեսած գործը որի սկսողն դեռ ոչ ինչ պատրաստութիւն չունեցած՝ հայհոյէ իւր բնած հակառակորդին այն հակառակորդին եմ ասում, որի մօտն է քո մեծամասնութեան ուժի կապը, թէ ահա եկի, եկ, արէք, անենք և այլ, զի՞ ցուք թէ պատրաստութիւն եղած լինէր իսկապէս, կարելի՞ էր ժողովուրդ այս ուղղութեամբ վարվել...։ Այսպէս մեծ գործը՝ այս տեսակ մարդկային կեանքի անծանօթն որ գործասիրէ վայ է այն ազգին թէ ոչ...։ Հարկաւ պ. «մշակի» խմբագիր ըստ իւր տե-



սութեան՝ գործողութեան ասպարէզ կամ լաւ միջոցներ այսպէս էր արժանաւոր համարած, որ առանց խրախճանքերի օգուտներ ցոյց տալուն հայհոյել, աջ ու ահեակ չհաւանել, մինչև բազմաչխատ Ներսէս պատրիարքին դաւաճան անուանել, Թուրքիոյ Հայոց թշուառութիւն բաւական չհամարելով նոցա, իւր թերթով աւելացրուց էջ լէջ խ ո տ ա ծ փ ը տ ա ծ և այլն, նաև ռուսիոյ Հայոց հոգևորականաց գործակցութիւն պախարակել հարուստներին անպատուել և իր մտերիմներ վիրաւորել իւրեան հաճոյքին չհնազանդելուն համար, որ մէկ թուենք և չգիտենք թէ ամենօրեայ թերթի ասպարէզ որ տեսութեամբ թողուած է այսպիսոյն կամ թէ ինչու ռուսիոյ Հայոց մէջ ուշադրութեան արժանացած չէ այս տեսակ վտանգաւորութիւն և արդարութիւն դուրս բերելու հետաքրքրողներ չեն եղած։ Թէպէտ ազնուական լինէր, բայց իրաւունք ով տուաւ որ Հայաստանի ժողովրդեան իւր սեննակի երևակայական տեսութեամբ անփորձութեան խաղալիք ունենալ, ժողովուրդը մի անձնաւորութիւն խաղալիք...։ Հայաստանցին այժմը և ապագայում կաղաղակէ ամեն տեղի Հայերուն, որ բաւական համարեն թողնելու կարճատեսներին կամ ինքնասիրութիւնից ստիպուած Հայ անուամբ գործի մէջ մտնողներին, զի այսպիսեաց չարիք քան օտարաց աւելի են իրենց ծանրութեամբ, ուստի և կ'բողոքէ իրաւունք...

Բայց պ. «մշակի» խմբագիր այս անստաճան համարձակութիւնը դեռ ևս ի նկատի չունենալէն յետոյ, երբ Թուրքիոյ Հայոց պատգամաւորները Եւրոպիոյ պետութեանց դիմեցին, այն ատեն «մշակի» առաջաւոր յօդուածով յայտարարեց թէ՝ Ռուսիոյ Հայոց ինկած գործեցին։ Սա էլ զարմանք չէ ընթերցող, ինչպէս յայտնի է ռուսիոյ Հայք կամ հոգևորականք Թուրքիոյ Հայոց մասին ոչ ինչ չգործեցին, բայց պ. «մշակի» խմբագիր իբրև փոխանորդ կ'դառնայ՝ ինքնիրեն Ռուսիոյ Հայոց կողմանէն և կը խօսի թէ ինչ որ Թուրքիոյ Հայոց հարցին կ'վերաբերի՝ այսուհետև իրենք անելուեն. Յետ կոնգրեսի որոշմունքին, Թուրքիոյ Հայոց պատգամաւորներու դէմ կ'բողոքէր և կըգանգատէր երեսնին խօսելով։—կոնգրէսին ներկայացրած յիշատակագիր լըրագրութեան կարծիքին չտուին—կերևի իւր լրագրութեան հա-

մար է ասում, բայց մի և նոյն յօդուածում ինքն կ'յայտնէր ասելով, թէ՝ «մենք մտածումէինք այս քան էլ տան Հայերին դարձնել լաւէ....:» Այս ետ ու առաջ դրամադրութիւնէն յետոյ 115 համարումէլ Թուրքիոյ Հայոց անգործութիւն կ'դատապարտէր ասելով—Քսան տարիէն ի վեր ունեցած սահմանադրութիւնից օգուտներ չ'քաղեցին, սահմանադրութեան կենդրոն Հայաստան չի'ջեցուցին, Հայերից այլ ցեղերին խառնուածներ չ'որոնեցին և նոցա Հայ լեզուաւ ուսումնասիրել չ'հոգացին և այլն: Այս խօսքերից երեւումէ որ պ. «մշակի» խմբագիր դէռ Թուրքիոյ Հայոց բոլորովին անծանօթ է, և իբրև ինքզինքն չ'հոգացող կամ ցաւերի ելքը չ'գտնող կ'ճանաչէ և կառաջարկէր մի նախագծի ձև ասելով «ահա այն նախագիծը՝ որին Թուրքիայի Հայերը վաղուց արդէն պէտքէ հետևէին:»

Թէև կարևոր չէ սոցա պատասխանել, բայց երկու խօսք ասենք: Նախ թէ մարդ մը որ իւր գործողութեան երբ նախագիծ չունի՝ որպէս կհամարձակի ուրիշին նախագիծ հրամայել, մենք չգիտենք մինչև որ աստիճան ինքնաճանաչ չէ այսպէս ազգային գործոց նուիրեալն, թողունք Թերթի ուղղութիւնն և հարցնենք թէ ռուսիոյ Հայք ինչ արած են այսքան տարի, որք ազատ հարստահարական ճնշումից, ապրումեն հարուստ վիճակով: Ապա ուրեմն ուր են Ռուսիոյ Հայոց ապահովեալ բարձր ուսումնարանները, նորութեամբ ծաղկած արհեստանոցներ, վաճառականական հաստատ գործերը, երկրագործական և հանգային ընկերութիւնները, որ տային Հայրենիքին փառաւորութիւն և ազգին մշտակայ հաց: Մենք չենք տեսնում տեղային հարմարութեան համեմատ սոցա նըման հիմնարկութիւնները, պատճառ՝ պատմութիւնից և օրեկան փորձերից յայտնիէ, որ հասարակային գործը զոհումենք մեր անձնական գործերին կամ զանազան հաճոյքներին: Ցիշեալների ցանկութիւն ունենալու ոգևորուողների մէկ նոյն ինքն պ. Գրիգոր Արծրունին չէ: Ապա իւր Հօր կենդանութեան ժամանակ որպէս վերայիշուեցին Հայաստանի Վան քաղաքի վարագայ ուսումնարանի օժանդակութեան մասին, որոյ համար Տփխիսեցոց չատերի սիրտ



տխրութեամբ լցուած է մինչև ցարդ, որ չկարողացան այն յաջող միջոցին օգնել հայրենասէր Խրիմեան Հայրիկին [1]):

Կ. Պօլսոյ Հայոց սահմանադրութիւն հեղինակողներու Նպատակ եթէ ուրիշի ձեռքով չքանդուէր, այժմեան պահանջներ արդէն գործադրուած էր Հայաստանի մէջ: Այս պատճառաւ էր որ պատերազմի նախորդ օրերում Ներսէս պատրիարք Անգլիոյ դեսպան Պ. Լայարտի հետ Հայերի մասին խօսած ատեն արդէն ասած էր, «թէ մեք սուլթանին չուտով ասածենք որ Հայեր կրնան ապահովացնել Ասիոյ կողմը.... Բայց Թիւրքիոյ ինչպէս սովոր է լսել միշտ ստորին քան իւր արժանաւոր հպատակին, ուստի և լսած չէ հայոց խնդիրը: Թողունք այն տեսակ խնդիրներու ընդունելութիւն, մեծ դժուարութեամբ հայերի ստացած սահմանադրութեան զօրութիւնն ալ չուտով թլփատուեցաւ.....

Ուրեմն պէտք է իմաստասիրել թէ որքան առաջ են Թիւրքիոյ հայերը հայրենիքի վերաբերեալ գործերուն մէջ, որոնք

---

[1]) 1861 թուին Գերապատիւ Խրիմեան Հայրիկ Վարագայ ժառանգաւորաց ուսումնարանի օգնութեան համար Տփխիս կըհամնի: Տփխիսեցիք նորա Հայրենասիրական գործի օժանդակութեան համար առատաձեռնութիւն կըցանկան՝ գրեթէ 20000 ռուբլի գրուղներ կլինին, որոյ աւելացնելու յոյս կուտայ գեներալ Արծրունին և կԹողուի նմա, այսպիսով փակուեցաւ Խրիմեանի միջոցները և այլ հանգամանքներէլ չուտով Խրիմեանին հեռացրին Տփխիսից: Ցիշեալ 20000ից ինչ տարաւ հետ. այս ալթիւ Խրիմեան Հայրիկից որքան նամակներ ուղղուած է և երեք անգամ էլ վարդապետները, (Գարեգին Սրուանձտեանց, Գրիգորիս Աղուանեան և Յովսէփ Նարեկայ առաջնորդ) բայց ոչինչ չէ տրուած. եկող վարդապետներից մէկին, ինչպէս Տփխիսեցիք ոմանք էլ գիտեն, ասած է թէ—Խրիմեան երբ չուղարկեց ինձ Արտամետի խնձորի տունկ և տանձ, ուստի և ես կուտամ, բայց Վանի առաջնորդարանին կուղարկեմ—կերեի այն աշխարհէն: Այդեօք նորա որդի խմբագիրն էլ նոյնանման չվարվեց այս ինչ, այնինչ խնդրով.....

վերջին ճնշման մէջ՝ իսկ գործեցին հրաշալի անվեհերութեամբ. բողոքեցին և զիմացան շատ տարի առաւել ևս այս վերջին տարին։ Ապա կարելի էր հաւատալ որ Ազգ. վարչութիւն չէր մտածել իւր աթոռ Հայրենի երկրին մէջ դնել, որ նորէն խրատողի նախագծով պիտի առվարէր։ Կամ թէ օրինաւոր նախատեսութիւն կը համարուէր Պ. Խմբագրի կողմանէն որ ամէն չիրագործուած խնդիր լրագրութեան խորհուրդին ենթարկուէր, որքան աննախատեսութիւն։

Այս տեսակ խորհուրդներ հարկաւ այն երկրին անծանօթ անձն կուելցնէ, իսկ լրագրական խորհուրդի պահանջքն՝ թէ դեռ չէ հասկցուած, մօտագայ ապագայում կը հասկանայ Պ. Խմբագիր որպէս լինել, զի Անգղիոյ շահերից և Թիւրքի ապահովութիւնից առաջին անգամ այնքան հնարաւոր էր իւր երկրի ընակուողների կողմանէն։

Այժմ մեք ասացինք որ Թիւրքիոյ Հայք գործեցին անվեհեր և իրենց հոգևորականք ևս անձնանուէր ծառայեցին, բացի այն նշանաւոր երկրից նաև ուրիշ շատեր, սակայն չենք կարող ասել որ նոքա ունեցած չեն պակասութիւններ, ինչպէս են երկար տարիներէն ի վեր գաւառներից մինչև կենտր. վարչութիւն ունեցած ներքին վէճեր և երկպառակութիւնները, որք թէև չէին կարող չլինել, բայց քանի որ նոքա էլ Հայաստանից հեռու էին ապրում չմտաբերեցին աւելի լաւ միջոցներ, որք սպասում էին Հայաստանի մէջ ամէն տեղի Հային, այն է մեր ազգային տարտամ վիճակին հիմնական փոփոխութեանց կարօտ լինել, և ոչ օրական հարցերու լուծման, շատ անգամ պարզ երեւցած է որ օտարների մասն ևս մուտ կը գործէր յուզմունքներ աւելի մեծացնելու, այս իրողութիւն ոչ միայն գաւառների մէջ այլ մինչև կեդրոն տեղի ունեցած է, որոյ արգասիք եղաւ 1866 թուին ամենագլխաւորիմը ընտրութիւն, որն որ ժամանակիս պահանջին և ազգային պէտքերուն այնքան յարմար չգտնուեցաւ, և ժամանակիս արժանիք գնահատելու համար որքան պէտք էր չկրցաւ վաստկել Հայ ազգը, որով և պատմութեան մեծ մասամբ ցաւ չէր թողուր։ Զգիտենք Պ. Մշակի խմբագիր



համոզուելու պիտի մօտիկնայ ուրիշներու հետ և խօսք գործողներին թողնելու ազգային հարցի մասին. . . . .

Գ.

Երևելի և պատմական փորձեր միշտ սովեցուցած են մեզ, որ այն ազգ կը շահի իր յաջող ապագայն և երջանիկ օրեր կուտայ իւր հայրենիքին, երբ ժամանակին յարմար անձերին կը յանձնէ իւր գլխաւոր կառավարչութեան ղեկն։ Այն ղեկավարներն են ազգային ալեկոծեալ նաւի ազատողն և դայն անվնաս իւր մտադրեալ նաւահանգիստ հասցնող։ Որքան երանելի կը լինէր հայ ազգի անշուք հայրենիքն, եթէ ամեն ուրեք գտնուող հայք կամ հոգևորականք իւրեանց ինկած պարտք կատարէին խղճի մտօք, այն ատեն Սանստեֆանօյի դաշնագրի մէջ հայոց խնդիր ամենայնեանեալ չէր մնար. և անորոշ Րէֆօրմը չէր յատկանար անբաղդ Հայաստանի բաժին. Իրեւ մեզ կուսուցանեն ի նկատի ունենալ մեր պակասութիւնները, թէ ինչ որ պէտք էր անել մենք չարինք, և մէկմը էլ չէ կարող համարձակել խօսելու թէ գործ այս կամ այն կողմի հայոց չմնաց։ Ահա այս տեսակ տղայատեսութիւն էր մեր առաջ լինող՝ որ մենք ետ մնացինք։ Ուղիղ ճանաչողութիւններ կը համաձայնին որ գործեր կան միշտ քանի որ Հայք ազգութիւն կը կազմեն։ Ազգային կազմութիւնն է որ այսօր մեզ արժան կանէ, վիճակի փոփոխութիւն ըստանալու, իր այժմու պահանջներ այս առթիւ է, և եթէ ժամանակին փնտռուէր շատ յուսալի էր որ այժմ ինքն ըստ ինքեան կը կատարուէր։ Այժմ կար ասպարէզ և ամենաթանգ միջոցներ մեր հայրենիքի մէջ, որ պատրաստ մեզ կսպասէր։ Շատ առաջ չեմք երթար, գէթ մեր հայրենիք պատերազմական կամուրջ եղած օրին։ Յայտնի էր աշխարհին որ Արևելեան հարցի նպատակն էր բոլոր Թիւրքիոյ ճնշեալ քրիստոնեաներին ազատել։ Անշուշտ Ռուսաստան Թիւրքիոյ երկրի քրիստոնեաների թշուառ վիճակ հաւասար ի նկատի ունեցած կը բաղձար ազատարար և փրկող լինել ամենեցուն, որոնց շարքումն էինք և մեք Թիւրքիոյ Հայերս։ Բայց մենք ետ մնացած էինք և չյիշուեցինք այնպէս, որպէս Նորին Կայսրութեան որոշած կամքն էր։ Զի մեզանից ով մօտեցաւ պատեհ ժամանակին յայտ-

նել մեր ցաւերի ողքանութիւն և նորա համար դարման խնդրել Նորին ողորմածութենէն այն՝ ինչ որ Մեծն Պետրոսի կայսրութեան օրէն յուսադրուած էին մեր նախնիք, և Ռուսաստան ցանկացել էր անկեալ Հայաստան վերանորոգութեան մէջ տեսնել։ Այս մասին տարտամութիւն տիրած էր ամէն ուրեք, մինչև Սան-Ստեֆանոյի դաշնագրութեան օր։ Եթէ չհոգային Ազգ. Վարչութիւն, Ներսէս Պատրիարք կամ Տատեան գերդաստան, շատ հաւանական էր որ բոլորովին դաշնագրի մէջ մինչև Հայաստան անուն իսկ չմտնէր. այս աշխատութիւններ վաստկեցին Ռուսաստանի շնորհ որ դաշնագրի 16րդ յօդուած յօգուտ Հայոցս նուիրուեցաւ։ Սորանով բաւական չզոհուելով Թիւրքիոյ հայք ուղարկեցին երեք նշանաւոր Արքեպիսկոպոս պատգամաւորները, Խրիմեան՝ Լօնդոն, Խորէն Նարպէյ՝ Պետրբուրգ, Իզմիրլեան՝ Էջմիածին, Հայոց համար ապահովեալ վիճակ մը ձեռք բերելու Եւրոպիոյ կօնգրէսի միջոցաւ. վերջին եպիսկոպոսն շատ շուտով ետ դարձաւ, որոյ արդիւնքն «Արարատի» ամսաթերթ կարելի է որ ապագայում պիտի պարզէ...., իսկ այն երկուս միացան՝ Բերլին, նոցա հետ նաև Ս. Փափազեան էֆէնտին. նոյնպէս քիչ աշխատութիւն առաջ չտարին Լօնտոնի և Մանչեսթերի հայեր, իսկ մնացեալ տեղեր գտնուող հայեր անտարբերութիւն անգործութիւն կարծես սիրեցին։ Այստեղ պարզ կերևի որ Ռուսիոյ հայեր ժամանակի արժանիք թէև ճանաչեցին, բայց նորա յաջող պարագայներ գնահատելու կարող չհանդիսացան։ Կարելի է որ մի տեսակ ինքնախաբէութիւն այս հայերին նոյն և հոգևորականներին մոռացնել տուաւ որ նպատակաւոր գործողն կը վաստկի թէև մնաս էլ ունեցած լինի. այս մասին հոգևորականք խոսքաւ անտարբեր մնացին և այնու առիթ դարձան ժողովրդեան ալ անգործ լինելու։ Եթէ ոչ՝ մեզ հաւատալի չէր ոչ մի անգամ, որ Ռուսիոյ հայեր այսքան անտարբերութիւն պիտի սիրէին կամ անգործութեամբ ինքզինքնին ապագայ կենաց դատնութեան թողնելպիտի կամենային։[1])

[1]) Այս նկատմամբ Ռուսիոյ Հայոց կողմանէն շատ խնդիր արձարծողներ եղած են Թուրքիոյ Հայերին կարեկցելուն



Որովհետև մեր քաղաքական թաց և յաղթութեան վահան թշնամւոյն թողնելէն յետոյ, ազգի գործունէութեան կապ կամ առաջնորդներ միշտ հայ հոգևորական պաշտօնեաներ եղած են, այս պատճառաւ ժողովուրդ միշտ սպասեց տեսնել մի գործ կեդրոնից, բայց ոչ մի ժամանակ նպատակաւոր չերևցաւ նոցա լռութիւն, այլ մինչև վերջ և դեռ ոչինչ չէ ցոյց տրուած։ Խիստ զարմանալի է այս դասի անտարբերութիւն և լռութիւն, մինչև անգամ «Արարատ» ամսաթերթ. որ ընդհանուր ազգի հոգևորականութեան բերան պիտի լինի, նա երբէք բանմը չխօսեցաւ Արևելեան հարցի մասին, որոյ համար հայերս խաչակրաց պա-

համար։ Մենք կթողունք մամնաւոր յօդուածագիրներու թիւ և կըյայտնեմք հետևեալ հաստատ փաստերը՝ որոնց թէ կարդաբացնէ և թէ իրաւունք կուտայ ձայն տալու(?)։

Տփխիսեցիք 76 թուին տուին Կովկասի փոխարքայի միջոցաւ Ալէքսանդր կայսրին մի բազմաստորագիր ուղերձ, որ Կոստանդնուպոլսոյ դեսպանախորհրդի մէջը Ռուսիոյ դեսպանով յիշուէին Ասիայի քրիստոնեայ Հայերը՝ որպէս եւրոպական քրիստոնեաներ։ Նորին Ողորմածութենէն քաղցր ընդունեց բայց Տփխիսեցիք մինչև զգացին գործելու պէտքը՝ արդէն դեսպանախորհուրդը վերջ տուածէր իւր գործոյն։

77 յուլիսի 13 թուով Բագուեցիներ տուին մի բազմաստորագիր խնդիր վեհափառ Կաթուղիկոսին, այն իմաստով որ գումարուէին զանազան կողմերէն բանիբուն և քաղաքագէտ անձեր սուրբ Էջմիածին, որտեղ պիտի խորհուէր և տնօրինուէր Թուրքիոյ Հայոց վիճակի փոփոխութեան յաջող միջոցները և փութային գործադրութեան՝ այն միջոցաւ որտեղի պարագաներ պիտի ներէին...։

Մօզդոգի մէջ ևս ցանկացողներ եղած են Բագուայ ուղղութեան հետևելով տալ վեհափառ Կաթուղիկոսին մի խնդիր։ —Բայց մի քահանայ արգելք եղած է։

Գանձակեցիքն էլ մի արժանաւոր քահանայ պատգամաւոր ուղարկած էին 77 թուին սուրբ Էջմիածին, թշուառ եղբայրների վիճակի համար...։

տերազմէն մինչև ցարդ նորա ամէն անգամի դուրս զալուն տանակոխուած ենք, և մեր պանծալի հայրենեաց յիշատակութիւններ աւերակների դատապարտուած են և հազարաւոր բարեկի գեղեր և ճոխ քաղաքներ մոխրակոյտների հետք թողած են։ Այս մասին Հայաստանի բողոքին և աղաղակին ունեցերք արձագանք տուաւ այս տարի։ Բայց մեր հոգևորականութեան թերթ կրօնի ինքնինքը միշտ անցեալ տարիների մէջ ձգել, և անցեալն խօսել, այնպէս հեռացած էր ներկայէն, որ կարծես չկրցաւ մի անգամ իր շուրջ պատող Պէյապետցին և Վաղարշակերտցին մատծել մի եղանակաւ և նոյն դասն դրութեան դարմանը գտնել. որոց թշուառութիւն կարծենար և պատմական յիշատակութեան տխուր պատկեր չհանդիսանար։ Զգետեմք թէ ինչու ուշքի չէր, որ անցեալն անցած էր. ներկայիս պահանջներ և շահեր փոփոխուած էին, միայն թէ աշխատասէրն և հոգացողն օգուտ կըքաղէր։ Առաջադիմութիւն սիրող ազգերը այսպէս ժամանակներում միշտ բարեկարգած են վիճակներն ապագայի՛ն աղէկ ապրելու կամ զարգանալու և իրեանց գոյութեան դարերի հետ անձեցնելու վերանորոգութիւններ ձեռք բերած են։

Մէռելատիպ անտարբերութիւն, դու որ արդիւնաբերեցիր կոյր ինքնասիրութիւն, որքան մեզ ադրեկի ես, դի դու յոյսերով և այլ մտացածին բաներով խաբեցիր մեզ և խլեցիր մեզանից ամենաթանգ րոպէներ...։ Եթէ ոչ, որ օր Ռուսիոյ և Թիւրքիոյ պատերազմական թնդումներ սկսեցան Հայաստանի դաշտերի մէջ. այն առեն իսկ մեզ գործոյ ժամանակ էր. ինչպէս Էջմիածնի միաբանութիւնից երկու եպիսկոպոս և քանի մը վարդապետներ պատերազմական բանակի հետ լինելու պարտաւոր էին թէ ոչ, սրանք թէ պէտք ունեցած տեղեկութիւններ կըհաւաքէին և թէ պատահական պահանջներ շուտով կըկատարէին, կամ թէ կըյայտնէին ուր որ անկ էր. ինչպէս էլ պատահեցաւ տխրալի դաղթականութիւն և իբրև անտէր ժողովուրդ մնացին Ինգլիրի դաշտերը...։ որոյ տեղի ունեցան Մէքէլածէի պէտներ իրենց արժանաւորութեամբ համեմատել մեր խնամող ժողովրդեան մասին։ Երբ երկու՛ զէնք զրահ ունեցող՝ ազգեր հաշիւ ունէին



մէկզմէկու հետ, մինթէ մենք մեր ժողովրդական պաշտպանութեան մասին ոչինչ համար չունէինք մեր պարտականութեան առջև։ Նա մի շատ հնարաւոր էր աղաչել Ռուսիոյ կայսեր մարդասիրութեան միջոցաւ Եւրոպական պետութեանց և երաշխաւորութիւն խնդրել Թիւրքիոյ երկիր բնակող կամ սահմանագլուխ գտնուող հայերին համար։ Այսպիսի պահանջմը ամէնք կրնան զգալ որ շատ կրնացի էր Թիւրքիոյ իշխանութենէն պատերազմիս ժամանակ, Թուրքական հայաստանի Հայոց մասին քիւրդերից աշխարհօղուցմներից պաշտպանողական ապահովութիւն խնդրել, որովհետև Թուրք կառավարութեան թոյլ պաշտօնեաների շատ անգամուան տուած տեղիքները մեզ որդէն պարտաւորեցուցած էին անզգուշութիւն մեր ժողովրդեան մահ ճանաչել։ Այս մասին ինչպէս և չէր անհոգ Կ. Պօլսոյ Ազգ. վարչութիւն, որ 18 տարիէն ի վեր գաւառական հարստահարութեանց խնդիրներով Բարձրագոյն Դրան ուշադրութիւնը քանիցս անգամ խնդրել է, նոյնպէս այնտեղի ժողովուրդ աղաչեր է անհագին բազմութեամբ դրան դիմելով, սոյն խնդիր կամ աղաչանք ինչ պատասխան կամ գործադրութիւն ունեցած է — մինչև վերջեր, խոստում, խոստում...։ Բայց նորա տեղից փոխանակ կառավարիչների թոյլ կողմեր սրբագրելուն, աւելի խորամանկ ձևերի կը փոխակերպուէր, որոց անկանոն կառավարութեան խստութիւն բնակիչ հայերին սաէպ հեռացնելու կըպարտաւորեցնէր իրենց հայրենի երկրից։ Որով Հայն անճարացեալ պանդխտութեան կըդիմէր և Հայաստան անմշակ կըմնար։ Որոյ համար այս մարդկային ազգի քաղաքակրթութեան արժանաւոր երկիր աւազակ քիւրդերի որջ դարձած է։ Արա ուրեմն մեզ երազ էր որ հաւատայինք թէ Թիւրք կառավարութիւն տեղիք չի թողուր պատերազմական բանակին որ մեր եղբայրներ ոտքիտակ գնան, կամ թէ այս անգամ արժանաւոր վարձագրութեամբ կընայի Հայոց այնքան նուիրական հաւատարմութեանը վերայ։

Հետևապէս յիշելու էինք Հերձոգովինայի ապստամբութեան առնը. որ Թուրք լրագիրներ տեղացին շատ սպառնալիքներ Թիւրքիոյ քրիստոնէից վերայ, և գրգռեցին Թուրք կամ քիւրդ ժողովուրդ դէպ ի քրիստոնեայս, որոյ արդասիք երև-

ցու Ռուս—Թիւրքական պատերազմին, այնպիսի քաջնեկեւ եղեռնագործութեամբ։ Այն ամէն տեղի ունենալէն յետոյ, ալ այնուհետեւ անգործութիւն դատապարտութիւն էր, բայց կարող-գտնուող հայեր դարձեալ չմիացան թշուառներին հետ և արինակ-ցական պաշտպանութեան զօրաւոր միջոցներին չդիմեցին, որով մեր այժմու աղաչանք աւելի իրաւացի պատուէր մարդկու-թեան առաջ, և կըտեսնուէր պարզ, որ հայեր ինքնապաշտպանու-թեան եւ արժանի ձիրք ունին։ Եթէ իրեր պահանջեն՝ պիտի հաստատեմ որ եթէ այն պատեհ միջոցին մէջ կարող Հայոց կազ-մանէն քաջալերութիւն և օգնութիւն լինէր, այսօր պատրաստ զինուորուած հայկական գունդեր կըպաշտպանէին իրենց, և կը կառավարէին Վան, Մուշ, Բաղէշ, Աղերտ, Երզնկայ, Խարբերդ և այլ քանիմը բազմահայ քաղաքները։ Սորանով լուսաւոր Եւ-րոպան պիտի տեսնէր Ասիական քրիստոնեայ հայերիս արժա-նաւորութիւն, կըհաւատացնեմ որ մեր գործունէութիւն պիտի ցոյց տար պուլգարական ազգի գործունէութիւնից ոչ պակաս...։ Այս տեսակ մրցում Եւրոպիոյ անտարակուսելի պիտի անէր որ հայեր եւ արժանի են պուլգարեան հաւասա-րութեամբ բաժին ընդունելու։ Հաւատանք որ այս տեսակ գոր-ծունէութիւն ոչ միայն պիտի լեցնէր Ռուսաստանի փրկարար-ցանկութիւն, այլ կ՚ապահովցնէր Թիւրքիոյ ասիական մաս իւր հաւատարիմ հպատակով, նաև արեւելքում շահ ունեցող պետութիւն-ներ կըբաւականանային, եթէ ոչ՝ Անգլիայ նախարար վսեմ Մարկիզ Սալիսբիւրի կ. Պօլսոյ անգլիական դեսպան պ. Լայարդին Կիպրոս կղզւոյ մասին հետեւեալը չէր գրեր։ «Ասիական Թիւրքիան պարունակումէ իր մէջ զանազան ցեղերից ծագած և զանազան կրօններին պատկանող ժողովուրդները, որոնք ընդունակու-թիւն չունին իրանք իրանց կառավարելու, և չեն ձգտում ոչ մի կերպով դէպի անկախութիւն, այլ պարտաւոր են սուլթանի կառավարութեան իրանց ունեցած և քաղաքական բարեկեցու-թեան համար...» Անգլիոյ կառավարութեան մէջ այս տեսակ մտքերի ծագումն մեր ժողովրդեան ինքնապաշտպանութիւն ցոյց չտալուց և մեր հայրենիքի հինգհարիւրամեայ ինքնակառա-վար հայ իշխան ունենալու ցանկութիւն չյայտնելուց չէ՞, որ



գործ էր պահանջում ամեն անհատից (1) և ոչ անհիմն երեւակա-յութեամբ լեցուած ցանկութիւն կամ լոկ խօսք։

Վերջապէս թողունք այն ամէն չարածներ և անուշադիր թողածներ, որոնց վերայ նորէն խօսել կամ տեսութիւններ անել մեր խիղճ մեր դէմ զայրացնել է, այո կըզայրանայ և սըր-տերնիս արիւնով կըլեցուին....։

## Դ.

Հարց մը էլ գաղթականների համար։ Ռուսիոյ Հայոց մէջ կազմուեցան մասնաժողովներ թէ Տփխիսու և թէ Երեւանի մէջ, նաև շատ ուշ Բագուայ մէջ, որտեղ անցեալ 77 մայիսի 10 ից լինելուն ցանկացած էին մի գործող երիտասարդութեան խումբ,

(1) Այս ամէն տեսակ և ասկէ աւելի ընդարձակն ի-րագործութեան հասցնելու նախագիծ ունեցած են Բագուայ ե-րիտասարդութեան մէջէն մի քանիք, որոյ համար առաջին խըն-դիր տուին Վեհ. Կաթուղիկոսին, և յետ այնորիկ պիտի շա-րունակուէր մինչև պահանջների տեղը հասցունել։ Բայց լրագրական ազատութիւն ամփոփել պարտք զգացին, ուստի և խնդրագրի պատճէն ուղարկեցին Մեղու և Մշակ լրագրաց տպագրելու ուրիշ քաղաքացւոց եւ իրանց նմանուելու համար։ Բայց Մեղուի խմբագիր չգիտեմք ինչ աւթիւ պատասխանեց թէ կըվերաբերի Նորին օծութեան, իսկ Մշակը պիտի պա-տասխանէր առանձին նամակաւ ըստ իւր խոստման, այս տեղն ալ իւր բնաւորութեան համեմատ կարեւորութիւն չտուաւ և ոչ մէկին, թէպէտ խնդրագիր ընդունողն էլ ոչինչ պատասխանած չէ, որով ժողովուրդն զգուշացաւ գործելուց, ուրիշ կարծիքներ անելով, թէ և ճիշտ էլ չեղան այն կասկածներ, քանի որ օտար լրագրութիւն գործելու հրաւէր կըկարդար հայոց, իսկ միւս կողմէն խոչընդոտ էր հայր Ստեփանէն, սորա դառնու-թեան պտուղը ով որ տեսածէ, նա գիտէ նորա արժանաւո-րութիւն որքան թանգ պիտի նստի ազգին։

բայց Խորէն Ստեփանէ անուաննալ վարդապետն այնտեղ լինելով չյաջողուեց, զի նա իւր բնական համոզմունք սկսած էր այնտեղ արծարծելու փորձեր անել, որով խռովեցուցած էր այնտեղի ժողովրդեան եղբայրասիրական կամքը և բաժանած էր այնտեղի նշանաւորութեան արժանի կարեկցութեան սիրտեր, ոչ միայն Թուրքիոյ Հայոց նկատմամբ, այլ մինչև անգամ կարողացած էր զիւրահամողների միջոցաւ մարդասիրական ընկերութեան գործակից Գանձակի պ. Տէր Ներսէսեանի հետ ունեցած գործակցութիւն ալ բաժանել և չ՚ճանաչել, ասելով հրապարակաւ և ուսուցանելով առանձին, թէ «մենք մեզ հոգանք և մեր պէտքեր...։ Հաւատանք որ սորա համար Բագուեցին մինչև ցարդ դեռ ոչ մի կերպով չէ կարողացած գործը տեսնել, թէպէտ 78 մարդին կազմուեցաւ մասնաժողով։ Անուրանալի է որ այստեղ՝ աւաղ քահանայ տէր Թադէոս և երիտասարդութիւն գաղթականների մասին հոգ ունեցած են։

Գանձակեցիք Բագուայ նման բաւականին փող հաւաքելով ուղարկեցին Էջմիածին Նորին Օծութեան, այլ եւ արժանաւոր քահանայմը պատգամաւոր։

Տփխիսը որ գլխաւոր կեդրոնն էր, հաւաքեց քանիմը հազար րուբլիներ և հագնելիք շորեղէններ, այստեղի մասնաժողով հաստատուեցաւ բարձ իշխանութենէն, բայց սորա ուրիշ աւելի մի նշանաւոր գործ չտեսան բացի խառնակ գաղթականներին այցելութիւն գնալից, իսկ մեծամասն անդամներ Հայաստանից հեռու լինելով և ամարանոց գնալու աւելի պէտք զգալով ալ չունեցաւ տեղական կեանքին և գաղթականների համար մի նշանաւոր գործ, որոնք եթէ հետաքրքրուէին պիտի կարող լինէին շատ գործեր ստեղծել զանազան հնարաւոր եղանակաւ. այս մասին արհեստաւորք կամ վաճառականք պարտազանցութիւն արած էին, որ մինչև օտար լրագրութիւն քննադատութեան առաւ։

Անշուշտ պարտք կըմնար Երևանցուն, որովհետև թէ Հայաստանի կեանքին ծանօթ և թէ թշուառներին խնամող, այս աւելի պէտքեր տեսնելով պէտք եղածին պիտի դիմէր որև է վտանգելի եղանակաւ, և ճարէր նոցա համար մշտական հաց և



հագնելիքներ։ Եթէ երկու մասնաժողովի միջոց աւելի լայն գործելու կըդժուարանար՝ չկարծեմք թէ կարող չէին գործակցանել հոգևորական իշխանութիւնը. սոքա դարձեալ խիստ վարուեցան և գործելու յաջողութիւն սահմանափակած էին, արդարև պահանջներին համեմատ այս քանիմը հազար րուբլի զոհաբերութիւն ամենահասարակ բան էր, եթէ ուղենային բարոյական զարկ տալ զոհաբերութեան, ինչպէս կարելի է հաւատալ որ պիտի չյաջողուէր, իրենց բուն նպատակի հետ պարծելի գործեր ունենալու միջոց ձեռք բերել, թէև չենք կարող ուրանալ կարելի եղած գործեր, այսու ամենայնիւ անհոգութեամբ անցան շատ պէտքեր և անգործադրելի մնացին. Թողունք այն ամէն անիկք, յիշենք Պէտլիսի, Վաղարշակերտի, Ագրակու, Խնուսի և այլ մի քանի հայաստանի գաւառների մէջ տեղի ունեցած պատերազմի պատճառաւ հարստահարութեանց տեղեկագիր և բողոքներ հոգացուէր կոնգրեսին տալու՝ որի միջոցաւ որ հարկն էր, կամ ճանապարհի ծախսեր տրուէր ազգասէր երիտասարդներուն պատերազմի դաշտ գտնուելու։ Հարցնեմք այս տեղ ուր մնացին ազգասէրներու, գիտուններու, առաւելապէս վարժապետներու աշխատութիւններ և պարտաւորութեան արգասիքը։ Ապա լեզուագէտներու, և բանասէրներու աշխատութիւններ, որոնք պիտի պատմէին ազգի հարստահարութեան սկզբնապատճառներ և պարագայներ, որ ազգ. պատմութիւն ալ պէտք ունէր ապագայի փորձ տալու համար, ոչ թէ թարգմանել այս կամ այն լեզուէն գրքոյկներ՝ գաղթականաց օգտին ասելով...։

Թուրքիոյ Հայոց նման պարսկահայք եւ ունեցած են Գավրէժում մասնաժողով Ագրակու թշուառներին օգնելու համար։ Սոքա եւ մի քանի կռւանից յետոյ, վերջացրին մտածմունք, կերևի որ սոցա այժմեան բաւականչին անգոր վիճակ յիշեցնել չ՚տուաւ որ՝ եթէ ընդհանուր պարտքմը կար կատարելու, այն էր այս պատեհ միջոցին որքան կարելի էր ազատ գործելու, որոնց ներկայ և ապագայ բաղդ և ամէն հայի յաջողութիւն կապուած էր Թիւրքիոյ հայոց խնդրոյն հետ....։ Սոքա այնքան մոռացած էին Ագրակի հայոց խնդիր և նոցա հարստահարութիւն որ պարսից շահ Եւրոպայ գնալուն Գավրիժից անցաւ, բայց նոքա մտքի չը

բերին իրենց դրացի հայերի վիճակ և չ'յիշեցին բողոք տալ այն հարստահարող քրդերու վրայ, որոնք մինչև այն սահմանագլուխ գտնուող քրիստոնեաներին ոտնակոխած են, (Թող պարսից խաներ վախենային իրենց պարտք ճշտութեամբ չ'կատարելուն, մեզ ինչ երկիւղ.) Թէ և այն միջոցին Ազբակի առաջնորդ Բարդուղիմէոս վանքի վանահայր Թավրիժում գտնուած է եղեր, բայց տարաբաղդաբար հիւանդացած էր քրդերի հարուածից....

Ինչպէս երեւում է Ռուսիոյ զօրքեր քիչ օրէն յետ պիտի դառնան այն տեղերից որտեղ նոր սահմանագիծ որոշուեցաւ. բայց ազգի համար ցաւալի կըլինէր եթէ Էրզրումցին կամ Բա-յազետցին իրենց հոգևորականներով մէկ տեղ 'ի ձեռին ունեցած միջոցներէն օգուտ չ'կարողանային քաղել և ուշադիր լինէին իրենց վիճակի փոփոխութեան հետ. Գաղթականութիւն մի այնպիսի վտանգ է որ ամեն աստիճանի անձն կրնայ 'ի նկատի ունենալ, Թէպէտև այս դաշնութեամբ լեցուած փոփոխութիւն երկար տարիներէն ի վեր վիճակուած էր մեզ. Բայց այն անցեալ տարիների հետ անցան և այս կօնգրէսին մեր տարագրութեան օրեր. Երբ որ մենք մեր հայրենի հողի վրայ դիմացածենք այնքան հալածանք տանելով մինչև ցարդ՝ այսուհետև մենք մեզ վտանգած պիտի լինենք եթէ հետևենք գաղթականութեան. Քանի որ Եւրոպան այսուհետև նորէն առանձին ուշադրութեան առաւ Հայաստան և նորա բարեկարգութեան միջոցներ, երբ մեզ բաւականաչափ չեն լինիր՝ այն ատեն նորէն կըհոգացուի դարմանն, անշուշտ մեր զգացած և խնդիրքներս իսկ փրկարար առնուններ հասցնելով.

## Ե.

Թէև մեր կարիքէն վեր, բայց ինչպէս Հայաստանի բնակիչ չ'կարացի իրերի ստիպման գլխանալ և չ'խուզարկել մեր մօտակայ անցեալն կամ գործերի ընթացքի ուղղութիւն.

Այս բնական է որ փնասից և օգտից յետ, մարդիկ կըհետաքրքրուին նոցա առիթներով՝ մեր անցեալն որ յիշենք ինչ կըտեսնենք, մեծ մասամբ անտարբերութիւն, անվստահու-



թիւն, անհոգ յոյս և ինքնախաբէութիւն. որ բերաւ ներկայիս արդիւնք, այսէ Բերլինի աւագաժողովի վճիռ Հայաստանի խնդրոյ վերաբերմամբ, որոյ կարող ենք ասել լիազօրների սահմանափակ վարվում առ Հայաստանի քրիստոնեայս. Թէպէտ մենք մեծ յոյսերով լեցուած և պատրաստ, որ Եւրոպան կատար մեզ բարւոք վիճակմը, թէ մարդասիրութեան և թէ Եւրոպական կրթութիւն Ասիոյ մէջ տարածելու համար. կամ թէ կըլինէր, Հայաստանի ազատանք իր պատգամաւորների խնդրանօք և կատար այս անգամին այնքան, որ քանիցս անգամ արեւելեան հարցերին հայերիս ի նկատի ունեցած չէր, որպէս Եւրոպական մասի քրիստոնեայներ. այլ բուլղարին անմասն և միայն Թիւրքիոյ խնամքին վստահացած, բարձի թողի եղած էր հայերի վիճակի խնդիր. Այս որ ևս նկատմամբ որ ասուած լինէր՝ նա ապագային չ'ատող կըտեսնար Ասիոյ զարգացման փորձ. որով քրիստոնեայ հայեր կըմնային չատ անգամի անմասն հնոյ և կըփութային բաւականացնող հանդիսանալ Եւրոպին. Այս ասթիւ ունեցած էինք շատ չափաւոր խնդիր, նոյն իսկ Եւրոպան էլ խոստովանեց, որ հայերի ուզածն չափաւոր էր. Այո, չափաւորութիւն էր մեր առանալիք և բաւականութեամբ ցանկացանք ունենալ ինքնապաշտպանութիւն, կամ քաղաքական կերպարանքի առօր ինքնավարութիւն, որոյ մէջ մեր ներքին ցրուած ուժեր միացնող և զօրացնող կամ լաւ ևս ասել մեր տնտեսական և բարոյական իրաւունքներ մեր ժողովրդեան ձեռքին ունենալ, որպէս մարդկային օրէնք է ամէն ժողովրդեան իւրն իր հսկողութեան տակ պահել, բայց այս ամէն ի դերև ելաւ անհաստատ յոյս և ինքնախաբէութիւն.

Թէպէտ արտահայտած խոստումով կամ շատ ձիշտ լինէր Եւրոպիոյ որ և իցէ պետութեան ցանկութիւն Հայաստանի ինքնավարութեան մասին, կամ թէ պահանջած լինէր նոցա չահերն անգամ, դարձեալ մեր հաւատ Հայաստանի ժողովրդեան գործնէութեան և յոյս հեռաւորայ անձնանուէր գործակցութեան հետ կապուած պիտի տեսնայինք՝ միայն յուսալով Եւրոպայից մարդասիրական կարեկցութիւն, սորա համար պէտքական վստահելի մարդեր չ'գըտնուեցան և չ'փութացուաւ սկզբէն օժանդակող պէտքեր գտնելու.

Նորա վերաբերութեամբ ոչ այնքան պատրաստական մարդիկ կարօտ էինք՝ որքան մի առաջնորդողի, որ յորդորէր, խրախուսէր և իւրաքանչիւր իր արժանաւորութեան համեմատ գործի գլուխ կանգնեցնէր. եթէ այս լինէր՝ պիտի տեսնէինք այնքան մարդիկ, որոց եռանդ և գործ ամենիս և մինչև իսկ օտարաց զարմանք պիտի շարժեցնէր։ Կասենք ազգ մարդի կարօտ է, բայց թէ որ մէջերնիս մէյմը ուշադրութեան առնենք շատեր կը գտնենք, որք կըտանջուին ազգային գործի համար։ Եւ նորա կենսական նպատակի մէջ ոչինչ ասպարէզ չ՚գտնելուն յուսահատութեան մէջ են։ Որքան և որքան սուտ խղճահարութիւն, կորուստ մի առաջնորդողի համար, մէկ կողմանէն ազգի եռանդոտ երիտասարդութիւն գործ չ՚գտնելուն կըտանջուի մինչև վերջին ծայր վհատելով, միւս կողմէն Հայաստանի հայ իր ինկած պարտք կատարել չկրնալուն համար՝ իր ապրիլ կը դատապարտէ ապագայ սերնդեան պատասխանատուութիւնից վախնալով, Հայաստանի ուսեալ հայ երիտասարդութիւն արիւն ի սիրտ լեցուածէ, որ իր զգացած ժամանակին պարտաւոր չկրցաւ լինել, ճանապարհորդութեամբ փրկութեան գնացողներ իրենց բաղձանքին համեմատ ազգի կամք չկարողացան արդիւնաւորել, որոց ժամեր իրենց համար խիստ վհատական են. Կ. Պօլսոյ ազգ. վարչութեան աշխատութիւն իւր և ազգին մի տեսակ ճգնաժամի է յանձնում, բաղդի յաջողութեան յուսով, և դեռ անվեհեր գնումէ։ Հայոց Թիւրքի պաշտօնեայներէն բաժանուիլը արդէն հրապարական եղածէ, նոյն և ընդհանուրին տեսանելի է այսուհետև Թիւրքաց պաշտօնեաների ատելութիւն առ հայերս, որքաքին սուտի պիտի չնստին։ Այս անյաջողութեան առաջ ով կը խոստովանի և ով կըփութայ ձեռք ձեռքի տալու, գէթ այսօր և ո՞վ գիտէ, գուցէ վաղ ազգային վարչութեան սպառնող ճգնաժամից ծագի ազգի առաջ մի տարօրինակ ձախորդութիւն.....։ Ըստ երևոյթին պարտաւորեալների կողմանէն դեռ կատարեալ լռութիւն կըպատասխանուի այս հարցերին, ապա կրնամք ասել որ այն քանի եպիսկոպոսներ միայն պարտաւոր էին անձնուրաց լինել ազգին համար, ոչ, ուրեմն եթէ կարելի է ըստ ամենայնի լուրջ մտածենք ամենքս։ Հապա ինչ՝ Հայաստանցին ես մե-



ղաւոր համարեմք և այս ամէն բանի պատճառ նորան տանք, թէպէտ ընթերցողներից ոմանք գուցէ այսպէս ընդունեն։ Բայց իրաւունք բարձրաձայն է և այնպիսիներին խստապահանջ կանուանէ, որովհետև պարզ է երբոր երկրիմը ժողովուրդ երկար տարիներով ամէն տեսակ ստրկութեան ենթարկուած է, թէև փոքր միջոցիմը մէջ բաւականին ապահոված լինի, նա ինչ կարող է մտածել—օրական ապահովութիւն, նա այսօր օրական ապահովութեան ցնորներով չնչասպառ կապրի Հայաստանի մէջ և պահերէ Հայաստանի հայ մեծամասնութիւն կաղմաղ բնակիչ իւր հայրենի երկրի վրայ. կխօսի չափ հայկական սովրութեան հետ իւր մայրենի լեզուն։ Հայաստանցին հայրերի երկիր օտարին չը թողնելու համար, չ՚ցանկացաւ չքեղ և բարդաւաճեալ քաղաքներու մէջ բնակուել, թէև նորան այս ութհարիւր տարիէն ի վեր հալածեցին իսպառ հեռացնելու իր երկրի զանազան ցեղի թշնամիներ, բայց նա այն հալածանքներ տարաւ, երբեմն դիմադրութեամբ և երբեմն տեղական պահանջներին համեմատ վարուելով։ Նա լաւ ընտրեց այնքան ժամանակ իրան ստացուածք և դառն վաստակից տալ թշնամուն մինչև անգամ խնայել մի ձու իւր հիւանդ որդոյն 1)։ Նա հանեց իր ոտից տրեխ և չայլիկ քամակից ու հագցրուց երկրի թշնամի չեխին. իւր կրօնական արարողութիւն չ՚անպատուելուն համար. ընտանիք մոխրի և ամէն տեսակ կեանքի առողջութիւն ապա-

1) 76 Թուին պատահեցի Քաջբերունեաց երկիր Բերդակ գիւղ մի հայի տուն, որդին հիւանդ կուզէր մի ձու, տանտիկին չէր ուզեր տալ, երբ հարցուցի պատասխանեց տանտիկին ախպէր զաթի տղին ձուն լաւ չի, ահանջ մէկել տէսար էն անօրէններ եկան (քիւրտ և Ոստիկաններ) ես ինչս անեմ, որ ինոնք մեր խայուն պան չասեն—է կօ ինչ անենք, որ մենք ինորով է չուշ էսօր մեր խայու խոզին ջան աղատ կանենք, հուր տեսնանք էնա Աստուած երբ մէկ ճար կանի մեր խայանական երկրին, էնա խօրօտ քաղքի աղէք ինչի իսկի մէկ ճար չեն անի.....

կանող անկիւնների մէջ ծածկած պահեց։ Նա առաջին գիշեր համդիստ քնելու և ցերեկ անվախ օրը երեկոյ անելու միշտ սարսափի մէջ մնացածէ։ Հայաստանի երիտասարդ և ուհին իրենց նորապսակ ամուսնութեան քաղցր օրեր զգալի արտասուաց ծովի մէջ լող տալով կըխեղդուեն. զուրկ մնալով մարդկային աճումէ, և պատահումէ շատերին որ բաւականացնող գերեզման կըգտնէ։ Այս տխուր կեանքի պատճառ պարզ է, որ իր աշխատութեան պտուղ երբ կուտայ քրդաց և թիւրքաց՝ կը պակասի ներկայ և ապագայ ապրուստ, նոյն և երկրի մշակութեան զօրաւոր պարագայներ։ Այս դրութիւն առն և կնոջ կը պարտաւորեցնէ երկուքի խորհրդեամբ որոշել պանդխտութիւնը, ոչ միայն այր, այլ և 12 տարեկան որդին անգամ լինի։ Այսպէս փոքրահասակ օրէն բացուեցաւ Հայաստանի որդւոցն օտարութեան գնալ դեգերիլ մինչև վերջին շունչ. որոյ աշխատութեան արդիւնքն իւր հայրենիքի թշուառ ուարատութեան տեղ լեցնել եղած է միշտ։ Այս այն է եղած, զի նորա պանդխտութեան մէջ պատահած այն ամէն անտանելի դրութիւնները հայրենիքի ընտանեաց սիրոյն քաղցրութեամբ տանելէն յետոյ, նա խիստ խնայող է իւր ապրուստի մի զուրուշ ծախսին, թէ և շատ կարևոր լինի։ Եւ եթէ բաղդ կունենար Հայաստանի հայ դառնալու իր տուն, ունեցած դրամի տնտեսութեամբ կըծախսէր կարօտեալ ընտանեաց պէտքերին, իսկ երկրագործութեան պարագաներին կամ երկրի մշակութեան առատ է միշտ։ Այս տեսակ առատութեամբ նա ցոյց կուտայ որ իր հայրենի երկրի անշըքութիւն տարաբաղդութիւն համարած է և Օսմանեան հարկ ի սրտէ ցանկացած է արդիւնաւորել։ Հայաստանի հայ այս եղծով աշխատած է միշտ հայրենիքի թշնամիներից խոնարհւող չքեղութիւն վերանորոգելու զարդարելու և մարդկային ազգի քաղաքակրթութեան երկիր դարձունելով մշակել արդիւնաբերել և ծաղկացնել։ Բայց այս ամեն ջանք միշտ առ ոչն գնացած է. այն յաջող բարդումէն, որք են այն երկրի այժմեան տիրողներ։ Սոքա կըկարծէք որ օրէց օր աւելի հնարագէտ կը լինին հայերի ամեն ջանքն առ ոչինչ առնել, և նորան չթողուլ Հայաստանում, որ մի գուցէ հայի հարստանալ կամ յառաջա-



նալ զօրաւոր միջոց դառնայ, այլ ևս սարսափ չմնալու իրենց։ Հայաստանի հայ թող միշտ պանդխտի, դեգերի, աշխատի մինչև վերջին րոպէն, յոյս տածելով որ օր մը ազատ պիտի լինի բռնաւորաց ստրկութիւնէն։ Բայց որպէս հնար է, քանի որ նա ստիպուածէ թողուլ ընտանիք, տուն, կայք, հայրենիք և ամէն պաշտելի իրեր։ Նա հեռացաւ կամ կըդառնայ կամ թէ պանդխտութեան անմխիթար ամիսներով խոնաւ սենեակի մէջ կըփըտի նորա մարմնական առողջութիւն, և կըթաղուի օտար հողում, կամ թէ կըպատահի որ ճանապարհորդութեան մէջ ձին ննջած կատանդէ հողին, մի կաթիլ ջուրի կարօտ մնալով, չգտնելով ձիու գնացած աւելն երեսալուց հանգիստ րոպէ մը, որ գոնէ օգնոյ չունէր առնէր իր սիրելի կարօտեալներէն կամ վերջին յիշատակ մը թողնէր նոյն խակ հայրենիքէն .... ։ Այս վտանգալից ճանապարհորդութեան մէջ ով էր հող փորող կամ գործիք հետ ունեցող, որ նորա սառն մարմին պառկեցնէր հողի տակ և կատարէր Աստուծոյ հրաման կամ պաշտպանէր մարդկութեան պատիւ։ Ահ կարծես վարձուորներն էլ այսպես տեղեր աւելի մարդասիրութեան զգացումն կըվիրաւորեն. ոչ կըթողուն որ ձիու վրայ կապելով տանեն մինչև մի գեղ և ոչ էլ կըթոյլադրեն ընկերներին յանձնել այլ և այլ պատճառներով. նոքա էլ ստիպուած փոքր ինչ փայտերով հողը հող կըփորեն և կըլցնեն քարեր խճեր նորա մարմնոյն վրայ՝ հողի ծածկելով զայն....
Ահա Հայաստանի արական սեռի տարաբաղդ կեանքի վերջ.—
Զննելով որ մարդասէր Եւրոպան մարդկային արժանիք յարգելու համար ուսումնարաններ կըճոխացնէ, և ամէն տեսակ արհեստներ կըծաղկեցնէ մարդոց բարօրութեան և հանգստութեան նպաստելու, բայց մեր Հայաստանի 12 տարուայ երախան հայրենիքի պատւոյն համար թափառական և պանդխտութեան մէջ կըճնշուի և անզարգացում կըմնայ։ Մինչդեռ հայերիս ցանկութիւն է միշտ Եւրոպիոյ ուղղութեան հետևիլ։

Իսկ Հայաստանի կանայք, որ կարծին միշտ նորա ծոցը նստած է մնում ամէն հոգս, թէև ծածկուած են, յետ այնու այրերու պանդխտութեան ժամանակին նա հիւրընկալ է, պրաբար պատասխանատու և պատասխանատու է իր ամէն գործերի

մէջ, ինչպէս է ցորենի հունձին՝ մանգաղ ձեռին, խուրձն ու-սին դաշտն է, խոտհունձին՝ խոտաւէտ անդեր, կամ թէ թո-նիրից լրացած նոր հաց և կերակուր բանւորների համար շա-լակած կը տանի, ճանապարհ գնացած ատեն ձեռքին առձկան և գուլպայի շիւղեր կը տեսնես։ Եւ այլ տնային ծանր աշխա-տութիւններ։ Այս կրկնակի տոկունութիւն շատերին և շատ անգամ պատճառ է որ մշտական եղած է։ Այն տանն երբ է-րիկ մարդը մահ վաղահաս կը հանի, այնուհետև նորա գետի արտասուք մինչև մահուան բալէն կը տեսնես, նորան իր ունեցած տուն և որդիներ թողուլ գնալ նորէն ուրիշ այր փնտռելը, դա անկարելի է և՛ մահ է համարում։ Նա պարկեշ-տութեամբ, վեհանձնութեամբ զարդարուած է արդէն, սոցա կրօ-նասիրութեան հետ հայրենասիրութիւն միշտ վառ կը տեսնես։ Օրինակ նա եկեղեցիների և դպրոցների շինութեան մէջ մեծ ջանք և աշխատութիւն կը նուիրէ։ Իրմէն ստոր վիճակ ունեցող դը-րացիին օգնող է ըստ իր կարեաց՝ այնպիսիք ուրախութիւն կը համարեն իրենց որ իրենք նուաղ ապրին և հայիմը ընտա-նեաց կարող լինին բարեկամը ընելու, թէ սոցա մէկին պատճի թանձրասիրտ մարդի կին լինել, դարձեալ նա թէ իր էրիկ համոզելով և թէ որ և է եղանակաւ օգնել պարտաւոր է հա-մարում։ Ահա այս նմանութեամբ հայաստանցի կին, հայ անու-մը բարեգործութեան մէջ մեծ տեղիք բռնած է, արիասրտու-թեան մէջն էլ կը գտնուին շատեր որք կառավարչական և վարչական հսկողութեամբ կը տնտեսեն ել և մուտք օտար-ների դէմ։ Անխառն ազգային զգացում նոյնպէս նուաղ չէ և լսում է ոմանց բերանից, (ախ Հայաստան, Հայաստան) ¹)։

---

¹) Ճանապարհորդութիւն տարաւ ինձ 68 թուականին Հայոց ձորի հիւսիսի երես Վանի ճանապարհի վերայ և պա-տահեցի Ոզմեցի ստանդող հայերին, խիստ հետաքրքրական էր այս խումբի տեսարան, սոցա ամէն տեսակ դառնութիւն զգա-լի էր մինչև մտաբերելը համար, ոմանց ոտք բոբիկ, ոմանք մեր-կածածուկ անգամ չունէին, թէպէտև կային շատեր որ հրա-



Թէպէտ այսպիսիք հազիւ դուրս կը բերէ այժմ Հայաստան, իսկ շատեր ունենալու յոյս կը տածէ իր մէջ, շատեր չ'լինելու առիթ յայտնի է, որ սոցա պատուախնդրութեան ի-րաւունք խլողների ստիպմունքն է որ նուաղներ կը գտնուին ազգի մէջ և անցեալ դարերի դեր չէն կարող ունենալ հայ իգական սեռ։ Սոցա մահուան յիշատակութիւն ևս դառն է. որքան պատահած է վեցամսեայ որդւոյ մօր, որ անօրէններէն ընդունիլ են մահուան հարուած, պատճառ որ մի կտոր բան պակաս տուած կը լինի հայ կին, կամ կաթնկեր տղան հի-ւանդ, մայրական խանդ չ'թողուր ձգել որդւոյն և գնալ քիւրդին ծառայելու և կամ ծառայութիւն անիրաւի հաճոյ-քին յարմար չլինի։ Ահա այսպիսի առիթներ հայ որդւոյ մօր մահուան արժանացուցին....։

Չգիտեմք այսպիսի իրողութիւնք դեռ Անգղիոյ տիկնանց դութ չ'պիտի շարժեցնէ, այն տիկնանց, որք իրենց պետական ժողովից կը պահանջէին այրական իրաւունքների հաւասարու-թիւն քաղաքական պաշտօնէութեան մէջ մտնելու։ Իսկ Ա-սիոյ քրիստոնեայ հայ կնիկների ցաւալի վիճակ այնքան ծանր

---

ցան և ուրիշ զէնքեր ունէին։ Կարաւան մի տեղ իջեանեց, ծերեր և պառաւներ նստած աւանդում էին այն ձորի Հայ-կով կատարուած պատերազմի պատմութիւն։ Մի պառաւ ծունկի եկած ձեռք գետին տալով ասաց «փառք քեզ Աս-տուած, որ ափ էսա խայու երկիր թողերես մի խամար խէ-րեբ ի, դայիր մէկ օր էսա գէրութիւն կընցնի, չուքը եմ քո մէնէն, չուքը եմ խազար պէրան, մխ օրն էն օրն էր, որ Խայկ էսա տեղ զարկեց նետով Պէլին սպանեց, մխ էն օրեր, ախ էն օրեր որ օր մեր Ախթամարայ վանք չէն էր թակաւորով կա-թողիկոսով...։

Այս այն ժամանակն էր որ կառավարութեան անհսկող միջոցներից քիւրդեր ցրւում էին զէնք ունեցող և ճոխ ու բազմահոյ գիւղերը, Վանայ, Շատախի, և Մոկաց գաւառներէն սկսեալ մինչև Սղերտի և Ջզիրէի մօտ։

է, որը մայրական պարագ ու կաթնկեր որդիներ անգամ չեն կարող կատարել, և ոչ էլ մարդավայել աշխատութիւն ունին, և եթէ արժանի համարուէր ինձ Ասիայի մի անկիւնից կը խնդրէի բոլոր Եւրոպայից, որ իւր աչքի առաջն ունենայ հայերիս այս անտանելի կեանքը, որ միշտ ինքն ըստ ինքեան բողոք է։

Մենք յուսալենք որ կարողացանք սորանով պարզել Հայաստանի ժողովրդեան վիճակի պարզ պատկեր և չգիտենք թէև այնպիսի ընթերցողներ ձեւաւոր նստած կարող են մեղադրել նորա անապրելութիւն և անգործ մնալ. Կը յաւելում այս ևս որ չկարծուի թէ մենք մեր վերայ առինք Հայաստանի անցեալ տարիների արական և ֆիզական կեանքի ամանելի նկարագրութիւն. այն որ առանձնապատիւ ևս ծանր պիտի լինէր. Այլ մանաւորապէս ցուցել անցեալ վիճակը և բացատրել նորա ներքին միջոցը, ուստի ասենք որ և է այս կամ այն մատածման պիտի խոստովանինք որ Հայաստանի հայն այն ամէն անտանելին տանում իր բնիկ երկրի մէջ, յայտնի է որ սովանցնել տուած է հայերի արիւնով վաստակած պարտքեր և իրաւունքներ, այստեղ մենք երկու եղանակի միջոցով կը պարզենք Հայաստանի հայու զգացածը ընթերցողներին։ Նախ Հայաստանցին փրկելու համար Եւրոպից խոստումն ունեցել է միշտ, և այն օրից Եւրոպան կապել Հայաստանի հայերին իւր մարդասիրութեան հետ, երբ խաչակրաց պատերազմ հրատարակուեց մահմետական բոլոր ցեղերի դէմ, հնայելով որ հայ քրիստոնեան շրջապատուած բարբարոսներին այս ցեղերով և իր հայրենիքին թշնամի, պարձեալ խաչի դրօշակին և սուրբ տեղեաց ազատութեան եկաւ քրիստոնեայ Եւրոպացւոյն առաջնորդ և նորա բանակին գործակից դառնալու, ամէն մասամբ իւր զօհեր չխնայելով։ Եւրոպան ալ գիտէ որ այս առթիւ տուինք վերջ մեր Կիլիկիոյ քաղաքական փառքին, զի խաչի դրօշակի այն օրուան գործ այս չէր ինչ որ այս դարի սկզբէն մինչև ներկայս ունեցած է, այլ այն օրից սերմանեց նախանձի ոգին և ատելութեան չար կիրք առ արևելեան քրիստոնեայս. որից յետ մեր աշխարհ քարձիթողի եղած ինքնուրոյնութենէն, որով այլ ևս ազատ չմնաց մոլեռանդ ցեղերի հալածանքից և հարստա-



հարստութիւններից, բայց Եւրոպան իւր մարդասիրական ցանկութեամբ շատ չափաւոր փարուեցաւ առ քրիստոնեայ հայերս, և երբէք չէ տուած մեզ միջոցներ ինչ որ տրուած է Արևելեան Եւրոպական մասի ազգաց, այս իրաւամբ երբ 76 թուին Կ. Պօլսոյ դեսպանախորհուրդէն խնդրեց Ներսէս պատրիարք Հայերիս մասին, Եւրոպացոց մէկն ասենք դեռ արդարացի չանուան Հայերիս պահանջքիչ չանցաւ պատերազմի պատճառաւ մեր անմեղ զոհերի համար իրանք աղաղակեցին, նաև տաղներ էլ եղան վերջերս մեզ համար թէ ինչու զէնք չվերցրին Հայերը։ Այսու աղագաւ հայերիս ինքնուրոյնութիւն ունենալու Արևելեան հարցի լուծուելուն մէջ ակնունինք և մեծ իրաւունք. Ուրեմն պարտաւոր էինք Եւրոպայից դարևոր խոստման անհաւատ չլինել և այս անգամ զինել նորա, մանաւանդ որ Եւրոպից հաճութեամբ և պարագաների բերմամբ խաչակրաց նպատակ ևս յաջողել պատեհ համարուեցաւ, և Ռուսաստանի փրկարար Աղեքսանդր կայսեր արդարամտութեամբ ազատութեան ձայն տրուեցաւ Թիւրքիոյ բոլոր քրիստոնէից։ Թիւրքիոյ հայք այս ազատութեան ձայնէն մասն ունենալու փափագին, որոյ համար պատուար կը գրանուիրք թէ Հայաստանցի և թէ ամէն տեղի հայք յայտնել ակնածութիւն ազգի գործողներին և սիրել մեր սրտի խորքէն երախտագիտութիւն ազգ, վարչութեան ատենի առջև, նշմակենք հայրենեաց անձնուէր երիտասարդների անուններ պատմութեան մէջ անմահացնելու, խնդրենք որ ընդունին մեր երախտագիտութիւն թէթևացնող իրենց վիշտերին. թէ համագործութեամբ զինուորներ և թէ պատերազմական դաշնակաւ և նորա չորրորդ խորհուրդ եկեղեցական և աշխարհական, նաև ընդունին մեր համայն ազգութեան քաղաքականութիւն այժմն որ է զօրծելոյն և ժամանակի արժանիք անապրելութեան չթողնելուն, որոնց յաջողութեան բաղդակից և անյաջողութեան բաժանորդ լինենք։

Իսկ Եւրոպական ազգաց և պետութեանց գլխաւորապէս Ռուսիոյ կողմանէն ազատութեան քննուածներուն որպէս կարող ենք մեր սրտի զգացածն պարտաւորութիւն յայտնել,

նաև Գաղղիոյ և Իտալիոյ, որք անկեղծ մարդասիրական ընդունելութենէն յետ մեր պատգամաւորներին յուսադրեցին աներկիւղ և ուղարկեցին աւագժողովին. մինչդեռ երեք պետութիւնք և Անգղիական ազգ ևս կարող եմք ասել, որ իրենց խոստման համեմատ ազատ մնացին մեղքից և յանձնարարեցին փակադորներին որ պաշտպանեն հայկական խնդիր։ Բայց աւագժողով չտուաւ մի որոշ լուծում և անցաւ Եւրոպիոյ մարդասիրութեան տոմար, պատասխանատու մնալով իրենց ազգի յանձնարարութեան առաջը։ Ուստի այս մասին ազգ, վարչութեան արժանաւոր յայտնութիւն երբ կընէ իւրաքանչիւր պետութեան, արդէն մեր ամենևս ցանկութիւն է։

Երկրորդ Հայաստանի հայ յուսով լեցուած բոլոր ամենայնի և կը հաւատար, որ հեռաւոր հայրենակիցներ այս անգամի Արևելեան խնդրոյ երևնալուն հետ ինքեանք ևս պիտի երևային անձնանուէր գործողութեան առաջնորդութեամբ, որոյ համար իւր աչք դրած, ձեռքեր պարզած կը դիտէր սահմանագծերի վերայ գտնել մի այցելու դէպի ինքն։ Բայց նա չգտաւ ոչ մի հոգևորական և ոչ էլ խելահաս ժողովրդական մի անձ.....։ Այո դիտեց և խիստ ցանկացաւ տեսնել օժանդակութիւն այն ամէն քանների համար, որք կուտային նորա բազուկներին զօրութիւն, սրտին ոգևորութիւն, խորհրդածութեան ուղիղ տրամադրութիւն, դալկացած ջիղերին կազդուրումն, որով ոտքի քայլը կարագանանար, ևս ուղիղ տրամադրութեամբ իւր օգուտներ իւր աչքի առաջ ունենալով անվեհերութեամբ կը գնար իրաւանց և պատւոյ ասպարէզը, և ամենայն սրտով անձնուրաց կընուիրուէր իւր հայրենիքի որդւոց և ընտանեաց բաղդին։ Բայց տարաբաղդաբար հեռաւոր հայրենակիցներ անձնասիրութեան, անվստահութեան և գործով անտարբերութեան մէջ էին։

## Դ.

Չգործել և անտարբերութիւն պահել այնպիսի յանցանք մը է, որին որ և իցէ տեսութեամբ ենթարկուողն կ'գղջայ վերջէնս։ Թող փորձն էլ՝ ցոյց տայ այնպիսեաց, որք իրենց գործով



ազգասէր ցոյց տուին, բայց գործմը չտեսած և գործի պահանջին էլ արգելք եղան, ինչպէս արգելք դրին խորհրդականների մտաց և գործողների վերայ։ Ցնոյ ասացին թէ աւ նոքա (Թուրքիացիք) թող գործեն։ Պարզ կերևի մտանանից, որ այնպիսիք չգիտեն ազգասէրների ցաւ և չունեն նոյն ճաշակն։ Ուղղեան ազգասէր անձինք մի տեսակ ոգևորութիւն կունենան, որք ոչ գիշեր քուն ունին և ոչ պարապ խօսելու բարէներ կսիրեն, այլ որքան որ կգործեն այնքան սուր մաքի վառ բաղձանքն և եռանդուն սէր անբաւական կհամարեն։ Այո, երբ եռանդն և նորա սէր իրան առաջնորդ կլինին նա կրգտնէ չեղած տեղէն գործը, նորան գործ չի պակասեր, քանի որ նա լրջմտութեամբ շրջահայեաց է լինում և կտեսնէ որ գործի առաջ գնալուն հետ աւելացած են միևնոյն կէտին գործելու պէտքերը և լայնցած է նորա ասպարէզ։

Երանի կլինէր՝ որ այնպիսի սնափառ և ինքնասէր անձեր չկրթաղեցնէին իրենց հետ Հայրենիքի փառքին անխոնջ աշխատող այն նուիրական սրտերը։ Իրօք մարդ չճանաչելը և՝ նոյնպիսի դժուարութիւնները եղած են մեր ազգի ծանրաքայլ լինելու պատճառը։ Թէոր ուշադրութեան առնեմք այսպիսիք անցեալ և ներկայ տարիների մէջ շատեր կգտնեմք մեր մէջէն, որք օտարաց զանազան նկատմունքին կամ լոկ սնափառութեան են թարկուելով բացած են անելանելի խորեր ազգին առաջ։ Բայց մեր ազգ մեծահոգութեամբ այն բոլորն անցուցած է և այսօր Եւրոպիոյ ուշադրութեան արժանացած է մեր գոյութեան արժանիք։ Անցեալ և ներկայ յիշատակութիւններ ներկայ սերնդեան ժրագլուխ կորովի պիտի ներկայացնէ ապագայ սերնդեան առաջ. երբ այն ամէն փորձառութեան զաներից ուշարար պատկեր կունենամք առաջնիս, որոյ միջոցներ յարաբերական չափունակութիւն կերաշխաւորէ և գործողների արժանաւորութեան չափ։ Ամենքնիս համոզուած եմք որ գործերի արժանաւորութեան համեմատ աշխատասիրողն արգիւնք կվեր առնէ շուտ թէ անագան։ Սորանով մենք չենք կամեր այլ կէտի վերայ խօսել և ոչ էլ կկամենք ասել որ մեր ազգի աշխատութիւն քիչ էր անցեալում կամ ներկայումս, այլ մեզ

հաւասար արևելեան ազգերի համեմատութեան հետ ամէն մա-
սամբ մեր ազգային գոյութիւն պահպանել թանգ եղած է։ Այս
թէ հարցնեմք մեր աշխատութիւն և զոհից արդիւնաբե-
րութիւն և թէ ինչու նուազ է մեր յառաջադիմութեան պտուղը։
Սորա պատճառներ ամէնիս յայտնի է որ քանիմը զանազանու-
թիւն կայ նոցա առաջ տանելու։ Թէև մենք չենք ու-
նեցած այն զանազանութիւնք, բայց մեզ աւելի մօտաւոր և
ձեռնհասները յիշեմք։ Հինգ հարիւր տարիէն աւելի կլինի
Հայաստանին ցաւալի և տխուր յիշատակութեան ենթարկուելն։
Որքան որ Հայ կորմնցուց քաղաքական զօրութիւն, բայց նա
պահեց Սուրբ Գրիգորի աթոռ և նորա յաջորդներին աւելա-
ցրեց իւր վերին աստիճանի ակնածութիւն (այսինքն քաղաքա-
կանութիւս) մինչև օրս։ Այս յաջորդների չար՝ երբ աչքի կառ-
նեմք, չեմք գտներ նոցա մէջ ազգային յաջող ղեկավարութեան
մի որոշ ծրագիր յաջորդաբար թողուցած, որնոր լինէր ժամա՝
նակի պահանջին համաձայն և ազգային վիճակից քաղուած ու-
ղեցոյց, որով մեր ազգի կամ հայրենիքի կորստաբեր պատա-
հարներին դէմ դնելով մաքրեալ ազգային նպատակին հաս-
նէր։ Եւ եթէ ունեցած ենք այս նկատմամբ համձարի տեղերը-
նոցա մէջ էլ հազիւ կանենեմք, որ երկու յաջորդ մէկըզմէկու
ուղղութիւն սրաչափած են, կամ դուրս է հանեք ժամանակի
պահանջին արդեւք դնաղ կէտն, նոյնպէս նոր պահանջ նոյն հե-
տան վերայ աւելացուցած է։ Որեմն յայտնի է՝ որ մեր ազգային
աշխատութիւնները այսպէս անարդիւնք պիտի մնային. քանի որ
մեր ջերմեռանդ ժողովրդեան հաւատն ճիշտ իւր հայրենիքի
նպատակին չէր ծառայում, այլ դարձնում էին այս կամ այն
անձի և անձնասիրութեան առարկաները։ Որով մեր ամէն մա-
սամբ առած անհամար զոհաբերութիւնները չբերին իւրաքան-
չիւր ժամանակին արժանի պտուղը՝ որ այնքան անձնանուէր-
ներ մխիթարուէին և ազգ բարգաւաճէր օգտակար և յառաջա-
դէմ արդիւնքներով։ Այս ասածներին կարող ենք օրինակ բե-
րել հայրենեաց պաշտպան Ս Ներսէս կաթուղիկոսի հայրենա-
սիրական վառ աշխատութիւն. որու եռանդուն ցանկութիւն
պաշտելի էր ազգին, բայց ժամանակն և պարագաները խլեցին



թէ ինքն և թէ գործերը։ Այժմ երբ նորա նպատակի իրագոր-
ծման ժամանակն էր, այն նախագծի և ոչ մի կէտ չերևեցաւ և
ոչ էլ այլ նախագծով աշխատութիւն երևեցաւ, չնայելով որ
պարագաներ եւ միջոցներ էին պահանջում...։ (Մենք անկաս-
կած ենք որ Ազգային վարչութիւն այսուհետև ուղղութիւնը տա-
լու համար փոփոխութիւն կանոնին փութացնել հոգևորական
կենդրոն...։)

Եկրորդ՝ Հայաստանի բազմատոհմեանց մայրաքաղաք Անիի
անցումէն յետ՝ Հայերի Հայաստանէն գաղթել և տարածուել
աշխարհիս գրեթէ ամէն կողմը։ Այս Հայրենիքի կորստաբեր և
ազգակործան ճանապարհ ոչ միայն խուռնել տուաւ Հայաստա-
նէն իր բնիկ ժողովրդեան, այլ հեռաւորութեան հետ աճեցաւ
փարր առ փարր սառնութիւն մինչև մի մասն օտարացաւ և
չմնաց նորա համար Հայաստան և հայ ազգութիւն։ Հայ որդին
դպրախօսել այլ եւ հեռուէն չյիշեց Հայրենիքի մասին ունեցած
պարտքը և խրատները, նոյնպէս չնայեց իր նախահայրերի
կեանք առած, մնած, աճած և մեռած տեղն, որն որ նուիրական
աւանդ ունենք երկինքէն ամէն ուրեք գտնուող հայերիս։

Ահա այս և առաջին առիթներ մեր ազգային յառաջա-
դիմութեան առաջ չղթայած են ներքին անբաղդութիւն և ա-
նելանելի անտարբերութեան լեռներ հեռաւոր և Հայաստան-
ցի Հայերի մէջ։ Կարողենք ասել որ Հայի Հայրենիքը այսպէս
ճառաւ մնացած է անփախուստ այնքան տարիներով, որովհետև
բաժանեալն աւերի—առած է։ Սրդէն պատմութիւն և այլ յի-
շատակութիւններ ալ կը հաստատեն, ինչպիսի են Սաճառստան,
Լէհաստան, Հնդկաստան և ուրիշ տեղեր գտնուող հայերի հետք։

Սորա թողունք որ անցեալ են. յիշենք մեր դ. Պօլսեցիք
որք Յունքար խարխեխին կեցցէ (Հայաստան և սահմանադրու-
թիւն) աղաղակներով ամէն տարի կթնդացնէին։ Բայց մէկ օր
չտեսան Հայաստանի թանդուել հայաստանցու ամենօրեայ
եկղեղներով, երբ ամէն մի չոգենաւին հարիւրից աւելի կը լեց-
ուէին Պօլիս, և ոչ էլ մէկ օր հասարակութեան Հայաստան ճա-
նապարհորդելու՝ դէթ իրենց աչքի առաջ ունենային պարզ ան-
ուութիւն մի այն սրբազան երկրին. Հարկաւ այսպիսի մեղա-

ճորութիւն ոչ միայն Պոլսեցուն, Զմիւռնեցուն կամ Տփխիսեցուն է, այլ ամէն հեռաւոր հայուն։ Այժմ ինչ ենք ուզում անել այս և այն երազելի ձայներ տալով առանց նորա բնական պէտքեր գիտնալուն կամ Եւրոպայ ճանապարհորդելով ուսանել Եւրոպայէն, կամ այն տեղ, ուսանել հարստանալ և այն երկիրը ընտրել բնակութեան տեղ։ Այս ամենամեծ զրկողութիւնէ, որ Հայաստանի հացով սնած, մեծացած և նորա փողով Եւրոպայ ուսանեն, ճոխանան, փարթամանան և այնտեղ մնան ու մեր ամենաթանգ կաթիլ արժէք այնտեղի ծովերի մէջ անարժէք խառնեն։ Այս աննշան համարուած խրողութիւն մինչև որ աստիճան զրկանք է թէ Հայաստանցուն և թէ նոր երոպացոցին, ժամանակի խնդիր չէ. այլ ներկայ ենք և կտեսնենք։ Այս սարսափելի զրկանք դեռ չճանչցող անձեր կան և իրենց մեծ լուսաւորուած զարգացածի տեղ դնելով ինքնաճանաչութեան չեն մտածում, որ տեսնան թէ Եւրոպիոյ զարգացած անձեր անմիջական երկրի համար առհազին միլիոններ ծախսելու կ'պանդխտին մեր Հայրենիք նոր շահերու աղբիւրներ հիմնելու։ Արդեօք այս տեսակ զրկանքների մէկ փորձը, որ տուաւ Պոլսոյ արժէթուղթի պորսան, դեռ չզգացող մնաց։ Թող ասեն զրկանք էր թէ ոչ, որ Պոլսեցին, Զմիւռնեցին և այլք արժէթուղթի համար ծախսեցին անչափ կոյքեր ու տուին անհամար ոսկիներ նորա գնին իսկ Հայրենի երկրի հողին ոչ երբէք, որ նորա հարիւրի արժողութիւն վերջերս մինչև տասնուվեց չարժեց. զրկում չէ՞, որ սորա կիսով գանէ չպատրաստեցին Հայրենիքի համար. զրկում չէ՞ և քանի կողմանի թուենք, որ դուք չխիչեցիք և հեռեւեցիք չուայլ և փարթամ ծախսերի, հետամուտ չեղաք այն ամէն բաներին, որոնց կցանկայիք ունենալ այսօր և ինքեանքդ էլ լաւ գիտէիք, որ ընդհանուր փոփոխութիւն մը պիտի պատահի ձեր ներկայ օրերում և ձեր երկրի մէջ. Այս արգելառիթ և նախապաշարմունքով ծածկուած միջոցներ գուցէ ընթերցողին պարտաւորացնեն պատասխանելու, թէ որպէս հնար էր ունենալ առաջին երեսներում՝ Գ. հատուածի յիշուած գործերը և այն ալ այնպէս գործերը, յոր ազգերը տարիներով խորհրդեամբ կըբռնին յետոյ գործադրելու կըհամարձակին։ Այո՛ իրաւացի է և ո՞վ կարողէ ուղղու-



թիւն չճանաչել. մենք կըխոստովանիմք չատերի հետ, որ օրուան մէջ դարերի գործ տեսնալու համար անհրաժեշտ է և քանի մը տարուան պատրաստական աշխատութիւն։ Սակայն Հայի առաջն էլ կըյիշէ թէ-օր կայ տարի կըկշռացնէ, տարի կայ օր, յետեւապէս եթէ ասենք ներկայիս վիճակ միմիայն մեր անցեալ աշխատասիրութիւն արդիւնաբերած է, պարագաներ և ժամանակի բերմունքները կըբողոքեն մեր դէմ, նոյնպէս մի քանի արեւելեան ազգաց սկզբնական քայլերէն կրնանք տեսնել թէ ժամանակը գնհատողին է։ Սոցա գործի գլուխ գանուողներ և փոքր խումբեր անտարբեր չգտնուեցան ժամանակից և պարագաներէն օգուտ քաղելու իրենց Հայրենիքի ապագայի համար, որոյ համար իւրեանց երկրից անցած հեղեղներէն ճարպիկ գտնուեցան իրանց բաժինն վեր առնելու և հսկողութեան փութալ։ Այս օրինակներ կամ հայկական առածն որ յիշէինք, այսինքն ամէն օր գետ հեղեղ չի գայ, որ կոճ բերէ դուռիդ առաջ։ Հայաստանի քրիստոնեան էլ, ինչպէս արեւելեան մի ազգ, պատահեցաւ քանիմը անգամ հեղեղ, բայց նորա հետ վարվեցաւ իբրև խաղ՝ սա չեմ ուզեր՝ այն կուզեմ ասելով, յետոյ ոչ մէկն էլ չկրցաւ ձեռք բերել։

Ստոյգ է որ փայտի համար գետ մտնողն կըթրչուի կամ օգուտների գնացող վնաս էլ կունենայ, բայց այն օգուտների համար տուած վնասներից նա ժամանակին կրկնակի օգուտներ քաղելու ուղղութիւն կունենայ, եթէ որ ինքն տեսնելու աչք ունեցածէ։ Մինչև որ քանի մը աստիճան սխալ չը լինել ամէնքս կընդունենք, որ նպատակի մը վնասն անտարբերութեան վնասէն որքան էլ մեծ լինի, այնու ամենայնիւ նորա հետեւանք արդիւնաւորութիւն է և ոչ թէ յուսահատելի անդնդային կորուստ։

Այս պատերազմի մէջ մեր բոլոր վնասներ եթէ նպատակաւոր լինէին և մենք սորա, նորա միջոցներուն ենթարկուելէն թէ ազատ չ'լինէինք, շատ մեծ յաջողութեամբ կարող էինք այն անել, ինչ որ առաջին անգամին Ռումինացիք արին օտար անհամաձայններ դուրս հանելով իրանց միջէն։ Ինչպէս այս եղանակաւ յաջողեցաւ նոցա ազգային նպատակին հասնելու և այն առաջին չարժում ազգեց միչտ գործողների քայլափոխութեան

և առաջաւ ոգևորող կայծ այն երկրի ժողովուրդն որով, ահա քայլ առ քայլ այս տարի հասաւ այնտեղ, ուրտեղ ինքն յանկանաւ-մէր հասնելու։ Այսպէս առաջին անգամ յաջողութեանն աւելի զօրաւոր միջոցներ կազմուէր մեզ մեր Հայրենիքի մէջ և մենք էլ նոյն սկզբնաւորութեամբ ոգևորուած կըսկսնայինք մեր ժողովուրդ, որով կունենայինք նշմարելի ապագայ՝ որոյ յուսադրութիւն՝ գործողների թիւ կամ գործունէութեան ասպարէզ դեռ նեղ պիտի մնար մեր պատրաստական երիտասարդութեան։ Բայց ով էր որոնող այսպիսի միջոցները Հայաստանի մէջ կամ Հայաստանցուն ով հարցուց և մտիկ տուաւ առողջն,—այն՝ որ կարող չէր։

Ինչպէս մեր ցաւերը վիճակ մեզ պատրաստուցանում էր հայաստանեայնի զանազան ցեղերի հետ չահել և չահվելու, նոյնպէս նոցա բազմակողմանի չահեր իրանց ստիպած էր մեզ հետ լինել, երբ և է որ աշխատուէր ինքնուրոյնութեան դիմելու, օտար ցեղեր ոչ թէ առանց աշխատակից պիտի լինէին, այլ մեզանից առաջաւոր, մանաւանդ որ մէկ մաս Հայ ցեղից խորթացողներն էին, որոց ուղեցոյց գուք էք. պ. հեռաւորներ, և եթէ նա առնեցած լինէր հանճարի սրութիւն, ոչ հեռաւոր և ոչ մօտաւոր հայուն կտրանէր, այլ չուտով իր ուղածն և առածն արած էր, ինչպէս շատ անգամ այս սախթներով խօսուած առնեն լուածէ գժգոհութիւն առ Հայեր....։

Այս միջոցների խմատարիլու և արգինաւորելու պաշտօնը այդ թողած էր հոգևորական վարչութեան, գի նորա պարտքերի հետ նշանակած էր զանազան մօտքերը, որոյ գործադրութիւն կենդրոնական ծրագրից պիտի բղխէր և աւարտ հասցընող ընդհանրական հոկողութիւն (այս սաթիւ ինչ աշխատութիւն ունեցած է հոգևորականաց կենդրոնական վարչութիւնն), առա թէ ոչ, ինչ որ մանաւոր կամ փոքրերից սկսուէր, անշուշտ փոքր կ՚մնար կամ անարդիւնք։

Ինչպէս փոքր մնացին Հայրենասէր Երևանան Հայրիկի վարդապետութեան ժամանակի անձնատուէր աշխատութիւնները, որն որ այնքան հեռաւորների դասու վարկաւ Տփխիս, Պօլիս, Հեռաւորեա իւր գրուածներով, նոյն իսկ Հայաստանի երկրին պատ-



րաստել բանասաւորի գործքով հրաւէր կարդաց ամէն տեղի Հայերին և յանկացաւ ունենալ քանի մի ժառանգաւորաց ուսումնարանը, արհեստանոցներ, բայց հազիւ յաջողեցաւ միայն Վարագայ մէջ ուսումնարանը ունենալ, այն ալ գրէթէ հինգ տարի յաջող չարունակութեամբ մնալ դժուարացաւ նիւթական պակասութեան համար [1]) մինչդեռ ամէն հեռաւոր Հայերի պարտքն էր այն առնելն ի վեր լսելով չարունակել և սերտ յարաբերութիւն ունենալ Հայրենիքի անխոնջ Երևանան Հայրիկի հետ, որով անշուշտ ունեցած էր քանի մը ժառանգաւորներ և արհեստանոցները, որով այսօր հեռաւորն և մօտաւորն թէ պատրաստուած և թէ համոզուած կըլլինէին իրենց անձերի մէջը և յետ չէր մնար մեր այս անդրէն ժամանակի օգուտն աննշմարելի ապագայէն ընթերցող, դու ըղձացուր սորա ամօթանք և անյարմարելի մնաւն մեր պարոնները, որք Եւրոպայի չուաքին կհետևէին։ Աչա այսպիսի կլտորն են, որ ամժ հայաստանցուն կպարտաւորացնեն և նա ձայն բարբառոյ Հայաստանի կուտայ որ անցեալն դաս համարենք և պատրաստենք ամեն ուրէք գտնուող Հայերը իրենց պարտուց ճանաչողութեան ճանապարհ բանալ առ Հայաստան։ Ցի օր է գործելու, որոյ ապագաի սկիզբն է այսօր և ոչ վաղ։

Նոյնպէս Հայաստան կաղաղակէ ասելով՝ եթէ հեռացաք ձեր անձն պահպանելու նոյն և պարտէիք հայրենիքի քիչատակութիւն և նորա փառաց վերանորոգելու փափաք ձեր յաջորդներու սրտի մէջ անջնջանելի պահել։ Ընդ եկէք ուր որ է բնակութեան հայրենիք, այն տեղին հաւատար մնացէք ձեր պապերի չիրիմներ և արիւնով վաստկուած երկիր, որոյ թշնամիներից նեհմացած աւերակ ձեզ տխրութեամբ հեռու քշեց։

---

[1]) Մեծ յուսով ենք որ պ. Արծրունին (մշակի խմբագիր) այս միջոցներիս կը խուզարկէ Վարագայ ուսումնարանի մասին իւր հօր ժամանակով Երևանանի նուիրակութեամբ Տփխիսեցոց մէջի քանի հազար մանէթի խնդիր, զ՚ այժմ շատ պէտքէ թէ Վարագայ և թէ Վանի ուսումնարաների համար։

Նոյնն արտասուալից բացակայութեան բոպէին յայս Թողեցէք ձեր աւերակների դէտ մնացող հայրենակից եղբայրներին և բոլոր արենակցաց, այն օրուան քայլափոխութեան հետ հազար անգամ անմոռաց բարեւ, սէր և ուխտ կուտայք, այժմ գոնէ սիրտ տուէք և յիշէք մի անգամ։ Երբ շինեցէք բնակուելու տուն փոքր չքեղ նմանութեամբ, որ վերջէն մեծացաւ պալատանման, նոյն տուն մեծացաւ և աւելի պարտքերնիդ առ Հայաստանի աւերակներ։ Պալատանման տների հետ նաև ունեցաք պէտքական կարասիք նոյնպէս զգեստիւք տեղական համանմանութեամբ նուամուելու։ Եթէ սոքա այն նպատակաւ լինէր որ քաղաքակրթութեան աւելի շուտ հասնէիք, մաքի լուսաւորութիւն և ձեր եղբայրասիրական պարտքեր պիտի զրգռէր զձեզ Հայաստանի նահապետական կեանքի դրութիւնս փոփոխելու փութալ, որով քաղաքակրթութեան մէջ ձեր փառք միշտ ամենաբարձր մնար. միմիայն ձեր աւելի ծախսերէն անտեսելով։ Հայկական եկեղեցի կառուցէք օտար հողի վրայ կամ ուսումնարան Հայկական լեզուն ուսուցանելու՝ յիշէք և եղբայրներիդ որդիներ, որք անուս կմնան և անպատրաստ ժամանակի անբռնաբարելի ընդհանուր հոսանքների դէմ, նորն հնի դէմ պատերազմելու ասպարէզի է մտնում, մթութիւն ամենին տխուր տպաւորութեան կտանէ և քո աչքիդ երևցած սևն սարսափելի տեսլութեան կզրգռէ քեզ, դուք լուսաւոր երկրի մէջ լուսաւոր զարգացում կվայելէք և դեռ անբաւական կհամարէք։ Բայց Հայաստանի որդին կուզէ չարժիլ գործմը ընելու կամ լուսաւորութեան ասպարէզ ելել, բայց չի կարող Հայրենիք Թողուլ, երբ նա հայրենիք չԹողուց, զարգացում այնքան ընդունող չեղաւ նորան, նա այժմը ժամանակին շատ պատրաստ էր, եթէ ձեր հեռաւորութեան մէջ ընդհանուր հոսանքի գալիքներու դէմ պատրաստած լինէիք ճանապարհը։

Հեռաւորք, ահա եթէ դուք չպատրաստեցէք ճանապարհ և չեկաք մինչ օրս, դուք կը լսէք, Հայաստանցին կը տեսնէ, որ արևմտեան ծովէն Եփրատի գնացքով պիտի մտնի Հայաստան արևմտեան ազգ և տարիներով պատրաստուած հանճար։ Դուք որ շուտով Հնդկաստանից, Պոլսից, Եգիպտոսից և այլ տեղերից



եկած չընակուեցաք Երասխի հովիտներ, Եփրատի ձորեր, Տիգրիսի անցքեր և չհետաքրքրուեցէք կուսութեամբ պահուած անհատանելի հանգային քարածուխներ, նաւթային հրաշալի վտակներ, ոսկին, արծաթի, պղնձի և զանազան մետաղի ծաւալեալ հաստարմատ ճիւղեր, որք Տօրոսեան և Տուրուբերանի շղթաներով կապուած կպահպանէին քեզ համար քո եղբարք, որ օրմը օտարութեանէն կգտնայիք լուսաւորութեան պէտքերով բռնաւորուած և ձեռք ձեռքի տուած կգործէիք, որով կը պայծառանար Հայրենիքի նսեմացեալ փառքը և ամնայն Թշուառութեամբ ապրող եղբայրներ կվայելէին իրենց համբերութեան պտուղը։ Բայց դուք դեռ ձեր աչք չէք դարցուցած ձեր եղբայրների վրայ, չէք տեսած ձեր Հայրենիքում անհատանելի հարստութիւնները, որին ուրիշներ տեսնելու համար կարք չին տար։ Հայաստան որքան բաղտաւորութիւն պիտի տար ազգին, եթէ դուք մին զինքը տեսնելու հետաքրքրուէիք, ձեր անձնական շահերը քանիցս արդիւնաւոր և ապահովեալ պիտի լինէր, եթէ այնտեղ փնտռէիք, ապա՝ քաղաքակրթեալ ասպարէզի մէջ միայն ուրիշի աշխատութեամբ և նորանով պարծենալ կըկամիք, արդասիքն էլ ուրիշին կվերաբերի։ Հայաստանցին զարմանում է և խիստ յուզուած, որ իր հեռաւոր եղբայրներ իբանից չին առաջնորդուած այն բաների մէջ, որ պիտի հասցնէր զիրենք մի ցանկալի նպատակի։ Հայրենակիցք և Հայրենիք կրոզքէն, իրաւամբ հաշիւ կուզեն. այս 500 տարիէն աւելի օտարութեանդ մէջ վաստակածիդ Հայրենիքի բաժին տուր՝ և իսկ ժամանակն է, զի տարոյս պէտքեր կպահանջեն, ուրիշներու ձրգտումները մեզ անքուն լինելու աշխատութեան կմղեն։ Եթէ ոչ մեր այնքան տարիի դառնութեամբ ապրել և ձեր օտար երկիրների մէջ ճոխանալ անպտուղ դուրս կուգան, մեր ապագայ սերունդ մեր վերայ վայերգու կլինի և ամօթանք ծանր...։ Պարագաներ կցուցնեն որ մենք շատ յուշ ենք մնացած գործելէն, գէթ այսօր շարունակենք, ձեռնարկենք. դուք ձեր հարստութեան մի մաս դրամագլխով և Հայաստանցին իւր ջանքով փութանք վաղվաղակի Հայաստան ժողովրդական հաց պատրաստելու՝ արհեստով, երկրագործութիւնով, հանքային մշակու-

թունով և այլ միջոցներով որոնք ոչ միայն ժողովրդեան կարգեցնեն հայով, այլ ամէն բանով, որով նա ինքն իրեն կ՚ընէր ժամանակին արժանի մարդ և քեզ մշտնջենաւոր ժողովական. իսկ երկուքդ Հայրենիքով քաղաքակրթութեան մէջ պարծելի և օտարաց յարգելի։

Աւաղ և մեր ժամանակի կորուստն։ Արդարև անցուցինք այս քանիհինգ տարին անհոգութեամբ, մեծ կորուստ տուինք և կարելի է ասել դարերի որդիներ, Այո, որովհետև դեռ ուրիշ ազք միայն էր մեր Հայրենիքին ծանօթանում և թուրքի թոյլ կողմեր անփոփում և միջոցներ էր հնարում Եփրատի գետով Տաւրոսի շղթաներով Ասիայի յարաբերութիւն Եւրոպային մօտեցնել, այն երկրի հարստութիւն ևս Եւրոպայ տանել։ Այդ այս աշխատութեան ժամանակ, մենք մեր Հայրենիքին տէր կլինէինք, լինել ճանապարհներ մերն էր, այս լայն և յաջող ճանապարհն օտարութեան գնացող պիտի պահէր իր մէջ. հետևութ և շատ տարիներով օտարութիւնից օգուտներ չանելով պիտի դառնային և օգտուէին։ Եւր հետևութն և մօտաւոր ձեռք ձեռքի տուած Հայրենիքի մէջ աշխատէին, տեղացի գալիք ձեզ հետ դառն կլինէին և մշակեալ ձեզ հետ լինել կընարէին։ Հաստատ հաւատանք որ այն դառնացան կրօնի պատկանող ցեղեր, եթէ դառն լինելու պիտի դժուարանային՝ միջոցներ իրանց անկարող պիտի առնէր որ և իցէ քո յաջողութիւններին արգելք դնելու, քո տեղացի եղբայրների արխարտութենէն։ Ի՞նչ կասկած որ մարդը ունելիք և հաքնելիք ունենայ և մօտաւոր ապագայի յառաջադիմութեան ասպարէզի մէջ լինի և տեսնէ որ ինքն միութիւն մը ունի իր հետ կապուած. Եթէ ազում ես՝ փորձը տես, մինչև անգամ մի փոքր ում ունեցող այսքան տարւոյ սորկութեան տեղի տալ ազգային կլինար են կացնել իւր ինքնապաշտպանութենէն։ Այդէն եղչաս քարդն վախի մէջ խղդուած է. և դու ինչ կկարծես, եթէ նորա փախըստական կամ թափառական գրութեան մէջ չլինէին, Հայերից շատ պակաս էին արիութեան մէջ, ես չեմ ուզեր ասել երբեմնակի անուղղակի նորա հետ եղած մասերի զօրութիւն. այդ փորձն միշտ առնուած է մանաւանդ որ հացի կարօտ և



գործելու հակամէտ չեն։ Քրդաց այս տեսակ դրութիւն մեզ աւելի կընպատէր եթէ մենք գիտենայինք նոցանից օգուտ քաղել, ինչպէս քաղողներ եղան Հայերից և տուին օտարին։ Նոքա, որ արքունի հարկ տալ չէին յօժար, մեր Հայերի միջոցաւ յօժարուեցան. պ. հեռաւորներ, լուրջ մտէք այս խորհրդ։ Երբ տեղացի քանի մը պարագլուխ Հայեր այս տեսակ իրողութեան ձեռնհաս էին, եթէ նոցա մօտ լինէիք, պ. պօլսեցիք, եգիպտացիք և այլն ցիք նոցա հանգամանքները իրենց կարճատես չէին անէր, ձեր յարաբերութեան կապ նորանց հեռատեսութեան առաջնորդ կլինէր Ապա ինչեր չէինք կարող անել այն լայն միջոցների մէջ, որք Հայաստանի մէջ կային ի ձեռին 56 ի արևելեան դաշնադրութենէն առաջ։ Պէտք է գիտենամք որ այնքան յաջող չմնացին այս անգամի արևելեան հարցին, ինչ որ այս անգամի հարցին ունէինք գործելու՝ նա ևս խլուեցաւ և կը խլուի, մինչև անգամ զանազան ցեղի չահասէրները հետամուտ լինելով կը փութան քո Հայրենեաց և ազգային իրաւունքները խլելու։

Այս ամէն նշանակութեան արժանի կորուստներ անտարբերութեան համար տալէն յետոյ՝ դեռ մեր հեռաւոր պարոններ կպատասխանեն դուռ զարնող Հայաստանցուն [1]) «մենք ինչ կարողենք անել, պատրաստուած չենք ամեն բանի մէջ» Այս անձնասիրութեան կամ հեշտասիրութեան նախապաշարմունքով պատասխանն է, որ քնեցուցեր է մեզ՝ մեր շահերից զրկելու։ Մենք էլ ընդհակառակն կասեմք՝ որ Հայաստան ամէն տեսակ մարդիք ունի, պատրաստ է ինքնուրոյնութեամբ իր երկիր կառավարելու մինչև իր մէջ բնակւող ազգերին անգամ։ Որևմն կ. Պօլսեցին թող թողնի արժէթութը՝ Եգիպտացին Նեղոսի

[1]) 77 փետրուար 1 վանի կրակէն յետոյ Էջմիածին՝ այցելող վանեցիներին ոչ թէ չեն թողուր կաթուղիկոսին ներկայանալ, այլ իրանց Հաղարապատի սենեակ չգտնուած ատեն, սենեակը բանալ կուտայ հիւրնկալն և տուած տեղաչորն առնելէն յետոյ կըպատուիրէ ծառային թէ ըստ վանքի... հիւրերը մէկ գիշեր կըհիւրընկալուին...։

գնացք, Հնդկացին իւր հնդիկ դրացին և մտնեն Հայաստան։ Տարոնի ամբողջ նահանգի մէջ կգտնէ ազգի և Հայրենեաց վերայ մեռնող կորովի հսկաներ, թէև անուս բայց խրատագէտ, Վանի մէջ խորագէտ և ժամանակի արժանիքին հետամուտ լուսաւորութեամբ ոգևորուածներ։ Բաղէշի մէջ վաճառականութեան հմտութեամբ լի տուներ, Կարնոյ մէջ ազատասիրութեան հետ լուսաւորութեան ոգևորութիւն։ Երզնկայի, Արապկերի, Տիգրանակերտի մէջ արհեստից նորահնար ջանք և ծաղկեցնելու անյագ եռանդ։ Խարբերդի, Սեբաստիոյ մէջ երկրագործութեան մշակութիւն դէպի նորն մօտիկցնելու փոյթ, իսկ եթէ զէնքի մասին էք ասում, թէ որ մի տեղի փորձեն ծանօթ չէ.ք դեռ, տուէ.ք նոցա ձեռքին միջոցների պահանջն և կըտեսնէ.ք շուտով փորձն։

Այս քաղաքացոց բոլոր նշանաւոր յատկութիւններ իրար թէ կապենք աշխարհն էլ կ'խոստովանի, որ շատ կարող պիտի գտնուինք գործոյ պահանջին համեմատ ընթանալ։ Դուք պիտի համաձայնուէ.ք մեզ հետ, պ. հեռաւորներ, եթէ դեռ գործնականին կուզէ.ք դիմել։ Այո, պատուական, ընթերցող քեզ հետ մտնեմք մեր Հայրենիք և գործնականից դու համոզուիր, ես էլ ասեմ քեզ անկեղծ։ Դու քո և ամէնք իրենց ունեցածի քաւորդն մեր Հայրենիքի համար պարտաւորուածներ խառնէ.ք իրար զանազան ընկերութիւններ կազմելով. մշակին հետ՝ մշակ, երկրագործի հետ՝ երկրագործ, արհեստաւորի հետ՝ արհեստաւոր, վաճառականի հետ՝ վաճառական հանքագործի հետ՝ նոյն. ուստեսների, խորագէտների հետ այնպէս՝ որպէս դու գիտես, այնտեղ դու ամենին սիրելի և ամէնքն մէկէն իրար սիրող, բայց դու զգոյշ վարուիր որ չգրգռես նորա որ և է նախանձը, այլ վարուիր հեզ, պարզ, ներող նորա անգէտ սխալանքներին. մէկ խօսքով ունենալու է կառավարչական կրթութիւն և փորձուած վարչական հմտութիւն։ Մէկէն իմէկ արդիւնքից մի սպասիր մինչև իսկ տուր կերպովը վերայ դրամագլուխի տոկոսն առժամանակ մի, որով մեծ գործ տեսնալդ փորձն քեզ կըքաջալերէ և քիչ ժամանակից բոլորն էլ հաւասար կըստանան հազարապատիկ իրենց վարձքը Հայաստանէն և դուք կըլինիք նորա լորդերը։

## Զ

Հայաստանցի եղբարք, դուցէ հանգամանքները այս անգամ համոզեն մեր հեռաւոր Հայ եղբայրներին և նոքա ատեն անտարբերութիւնը ու մտնեն Հայկական ազգի անշուք Հայրենիքը՝ կամ թերևս պատուական ընթերցողն Հայաստան մտնելով ճանչցած լինի ընդհանուր շահերի սկզբնական աղբիւրները և փութայ անտարբերներին զգացնել իւրեանց Հայրենիքի պարտուց և իրաւանց ճանաչողութիւնը կամ թէ անձնական շահերի ապահովութիւն որտեղ լինելն։ Բայց մենք ինչ պատրաստութիւն ունիմք մեր արենակից քաղցր եղբայրներին հիւրընկալելու, զի աշխարհին օրէնք է՝ որևիցէ անձ հիւրընկալելուն պատրաստութիւն ունենալ արժանիքներին համեմատ։ Թէպէտ արենակցութեամբ և Հայրենիքի հողի վերայ բոլորս մէկ իրաւունք ունիմք ինչպէս և պարտքն, այնու ամենայնիւ Հայաստանցի բնակիչ Հայերս խիստ ուշադիր լինելու եմք մեր հիւրասիրութեան վերաբերեալ անելիքների վերայ։ Աշխարհի ընդունուած այս օրէնքի նպատակ պարզ է. բայց չկարծուի ոչ մեր և ոչ հիւրերու կողմանէն, որ այն պատրաստութիւնը լինելու է հասարակաց պատրաստութեան պէս կամ ինչպէս զանազան կողմերի սովորութիւնն է, այլ նոցա մեզ հետ բնակեցնելու և մենք նոցա հետ բնակուելու համար ուշադրութեան արժանի շահել և շահուելու պարագաները կամ արդիւնաւորութեան հասցնող միջոցները երաշխաւորեալ հսկողութեան պայմաններին կապել՝ և սոցա աներաշխաւորող միջոցներէն ոչ միայն զգուշանամք այլ հալածող լինեմք և իսպառ հեռացնեմք մեր Հայրենիքից և մեր ամէն գործերից։ Սոցա գլխաւոր արգելքները ամէնիս հասկանալի են, որև մեր Հայրենեաց և ազգային անբաղդութիւն եղած են։ Երբ գլխաւոր արգելքները այս տեղէն առաջացած են, որ չենք կարողացած մինչև ցարդ մեր արտաքին և ներքին արգելքների դէմն առնել՝ որպէս մեր Հայրենիքի շահը կամ ազգային միութիւն զօրացնելու միջոցն էր, դուցէ շատերն ասեն. թէ ինչպէս կարելի է առանց Հայաստանի վերանորոգութեան կունենամք Հայաստանցու և հեռաւոր հայերիս մէջ հայրենեաց ծոցում երաշխաւորող պայմաններ կամ թէ հայաստանայցել ընթերցողն տեղական հանգամանքնե-

րէն սոփոփելով հայաստանցիներու ոմանց հետ ձայնակցեն ասելու, թէ որչափ կարելի է միայն հեռաւոր Հայերի Հայաստան դառնալովը կարողանամք ազգային յառաջդիմութեան հասցնող զօրաւոր յաջողութեան համնել, մինչ դեռ մեր ազգային գոյութիւն պաշտպանողական իշխան մարմինը կամ հաստատ գործեր ունենալու միջոցները չունիմք ի ձեռին, բացի անկարող միջոցներով շրջապատուած հոգևորական իշխանութիւնը կամ անզօր սահմանադրութիւնը։ Արդեօք սոցանով մինչև ցարդ ի՞նչ պաշտպանութիւն կարողացած եմք ունենալ մեր անձնականի ապահովութեան համար, հողային անշարժ կալքերի և շարժական գոյքերի նկատմամբ, որ այսուհետև նոյն վարչական դիրքով կարողանամք վստահացնել և վստահել հեռաւորների Հայաստան դառնալով և բաց մերժել արգելքները և խոչերը մեր ամէն գործերից։ Այս տեսակ պահանջները ո՞վ իրաւացի չի գտներ, բայց արտաքին պահանջ ձեռք բերելու համար, նախ ներքին ուժ և տեղական կազմակերպութիւն հարկաւո՞ր թէ ո՞չ։ Ուրեմն աչքի առաջ ունենամք մեր ներքին զօրութիւն սպառող և մեր միութիւն ղասող գործերը։ Մի՞թէ չեն զգում այն պարոններ՝ որք ազգային և Հայրենիքի անդորրութիւն կը փնտռեն, սակայն Հայկական եկեղեցիէն կը զատուին և կը միանան հռոմէական, բողոքական եկեղեցիների հետ՝ ոմանք էլ մահմետական կրօնին խառնուելով բոլորովին կորսնցուցած են ազգութիւնը։ Հայաստանէն հեռու բնակողներ թող ասեն և զգան. հանգստութիւն փնտռելու համար միութիւն դատել՞ է թէ ոչ, երբ Հայաստանին պատող զանազան ցեղերի հալածանքներէն թողին և կը թողուն դեռ Հայրենիքն. որք հեռանալով մոռացան մինչև իրանք իրանց. օտարի շահերին խաղալիք դառնալ՞ է թէ ոչ, երբ հեռանալուն հետ թողին բոլորովին մայրենի լեզուն և հետևեցին միայն օտարի լեզուին։ Այսպիսիք ցուցամոլութեան ցնորներով դարձած են ուրիշներին կապիկ և մարդկութեան զզուելի անդամ...,։ Ապա մեր ազգային, եկեղեցւոյ կղերների մի մասի ունեցած մեռելատիպ անտարբերութիւնը, նոր ուսուսումնականաց մարդկային վարվողութեան և մարդաշահութեան տգէտները։ Գիտենք որ մեր ներքին զօրութիւն ցրուած լինելու հա-



մար մենք եա ենք և նորա համար անցաւ այս նշանաւոր արեւելեան խնդրոյ շրջան։ Ուստի դառնամք Հայաստան և տարակուսութեան տեղիք չկրեմք ոչ հեռաւորները ոչ օտարի խառնուողները և ոչ հայաստանաբնակներս, զի քիչ բաւականութիւն չէ երբ արտաքին ծանրութիւն կըզգանք և ներքին պակասութիւններ կը ճանչնամք, մանաւանդ որ եռանդ ունիմք և ջերմ սէր դէպի մեր ազգային և Հայրենեաց վերանորոգութիւն։ Հաւատանք որ սիրով կը հալեցնեմք ամէն դժուար խոչերը և արգելքները, հնարագիտութեամբ զօրութիւն կունենամք հաստատ բնակիչ լինելու համազգային եղբայրական սիրով Հայրենեաց հողի վերայ. հայ աշխարհին տիրող ժողովուրդ հայազգութիւն բազմացնելով կըզօրացնեմք և ապագային երջանիկ լինելու ցանկութեան կըհասնեմք։ Սորա համար բաւական է որ զգուշ լինեմք օրեկան խնդիրներէն և անձնաւորութիւն դրբաղ վէճերէն, և ամէնքս մեր ինկած պարտքը ճանաչելով կատարեմք բարեխղճութեամբ։ Հայաստանաբնակ եղբայրներ, հիւրնկալելու պարտքի տակ լինելուն համար մեզ վերայ կը մնայ Հայրենեաց մէջի երաշխաւորող պայմաններին հսկող լինել, որոյ համար ըստ մեր տեսութեան կը հետևցնեմ քանիմը երաշխաւորող պայմանների միջոցները։

Նախ Հայաստանի որևէ կրօնի պատկանող ցեղերին կապենք մեզանից մեր գործերով՝ որք մեր շատ պէտքերին կարողեն օգնել և մեր յաջողութեան չեն վնասում և անհամոզներին համոզելուց երբէք չը յոգնեմք։ Երկրորդ՝ Հայաստանաբնակ Հայերիս մէջը ունեցած թէ վաճառականական, թէ արհեստաւորական ընկերութիւնների ինչ լինելը յայտնեմք, իւրաքանչիւր ընկերութեան ինչ հիմքի լինելը պարզեմք, սոցա անցեալ և թէ նորէն ունեցած գործերի յաջող միջոցները ճշտեմք, իւրաքանչիւր ընկերութիւն իւր աստիճանի մէջ քայլ առ քայլ առաջ տանելու նախագիծն պատրաստենք և առաջադրեմք գործակցողներին, նաև այս ընկերութիւնների աւելի լայնցնելու համար օգուտն հասկացնեմք գործնական կէտից մեծերին և փոքրերին, գեղացուն և քաղաքացուն անխտիր, մեր բոլոր ջանք հողային տիրապետութեան և արհեստից նուիրեմք և մեր

ներկայ ապագայ հացի միջոց սոցա ընդարձակելուն և ծաղկեցնելուն կապենք։ Ուրեմն մտնենք գեղեր երկրագործ եղբայրների մօտ, նոցա մէջ երկրագործ ընկերութեան փոքր ճիւղեր կազմենք և տնօրինենք այն ինչ որ գիւղատնտեսական պահանջն է, եթէ կուզենք աշխատութիւն շատ արդիւնաւորել, հարկաւ մենք մեր գործնականով կը սովեցնենք մեր վարել, օրին ցանել, ժամանակին հնձել, հունձերի և անասնապահութեան արդիւնքներ աւելի օգտակար ճանապարհներով գործածել, տնտեսական կրթութիւն լաւ տալուորենք ամէնքի ընտանեաց մէջ։ Ոչ որի բռնութեան առաջ չնվաստանալ հասկցնենք օգուտները ցոյց տալով, որ իրենց ընչեր պաշտպանեն արիութեամբ... Նոցա շրջանին յարմար պարապմունքների և արհեստների քաջալերենք, ձմեռուայ պարապ ժամերին գործելու և ժամանակի արժէք գնահատելու գործ և փորձ ցոյց տանք։ Սոցա հունձի հում մթերքները մեր արհեստասիրական ընկերութիւններով կարելի եղածին չափ մշակենք և ամէն արհեստաւորների ջանքեր կանոնաւորենք գեղերի ընկերական արդիւնքների հետ։ Արհեստասիրաց մշակուած մթերքներէն մեր պէտքերին պահենք մեզ, իսկ Եւրոպային կամ այլ տեղերին օգուտ բերողները, յանձնենք մեր վաճառականաց ընկերութեան։

Սոքա գեղերի մէջ գործ դնելու համար գիտենք որ մեր շահերի պահանջ այն տեսակէտից պիտի լինի, որ միշտ մեր երկրագործ յուսահատ եղբայրներ հող ունենալու մէջ ընդարձակուին, շահից չզրկուին, արհեստաւոր և վաճառական ճոխանան ու գործողներս քաջալերուինք, եթէ ոչ՝ նոյն կը մնենք՝ ինչ որ էինք։ Ուստի անցեալ և ներկան շատ ուշիմ կերպով հետազօտենք՝ այս հետազօտենք և սթափուինք ու բռնենք նոր ուղիղ ճանապարհներով մեր շահերի եկամուտը։ Թողունք բոլորովին յուսահատութիւն՝ հին վարմանց և շահերի ձևերի հետ, Թողունք օտարաց աննշան սովորութիւնների յարիլը՝ ազատութեան հետ (նոյն և պահանջենք եկող հիւրերէն), Թողունք ցուցամոլութիւն՝ իւր յիմար նշանակութեան հետ, Թողունք մեր յոյս օտարի վերայ դնելը՝ կոյր ինքնախաբէութեան հետ, Թողունք և Թողունք այն ամէն, որք մեզ չեն լինիր օգնական



և լքեն են փչերով կամ զանազան տեսակ անձնական կիրքերով, արդարև լքեն էին և են, երբ յիշենք դրամափոխ կամ տոկոսատէրերը. առուտուրականք (որք փոլիցաչի և սալաֆչիներն են) կամ գեղ առնող տասանորդատէրերը, նաև այն իշխան աղաները, որոնք ազգի և իրենց գործերի մէջ խիստ հարստահարութիւն կը գործէին գեղացի և քաղաքացի կարօտ եղբայրների վերայ, առուտուրի միջոցաւ։ Դեռ չեմք ուզեր երկար թուել այս տեսակ մարդկային սեռի աճում սպառող և եղբայրասիրութեան վնասող նախապաշարմունքները. որ երբեմն ուղիղ համարուած ագիտաբար նոցա մէջ կը յամառէինք մնալ, ճշմարիտ չենք կարող այս տեսակ անուղիղ կայանքներին և քայլերի վերայ այս տխուր րոպէին խօսել և պարզել նոցա մթութեան մէջ թաղուած անելանելի խորխորատները, այլ ուշքի կը խնդրեմ մեր ամէնիս։ Գէթ այս վերջին արևելեան խնդիր թող մեզ համոզի թողնել այն սովանք տուող և մեր ձեռքով մեզ թշուառութեան դատապարտող գործերնիս...։ Թէպէտև մեզաւոր չէինք ասենք՝ որ զանազան տիրապետող ցեղեր մեր Հայրենիք տնակոխելով պարտաւորցուցած էին մեզ մտածել մեր անձնական շահեր ծուռ տեսակէտից և չփիչել մեր շահերի իսկ օգուտն կապուած լինել ազգային օգուտների հետ և մեր պատիւ փառաւորութիւն Հայրենեաց ազատութեան, պայծառութեան հետ։ Այս մասին այնքան թմրած էինք, որ մինչև անգամ օրեկան փորձերից անգամ չէինք զգուշանար և ոչ էլ ըմբռնումէինք մեր պապերի առածն, թէ գեղացու մէկի շահ և վնասն բոլոր գեղացուն կը հասնի, թէև այս տեսակէտով շահի փնտռողներ շատ կային մեզ մէջ կամ գտնուած են, որոնք հասարակաց օգուտ մեծ ջանքով հոգացերեն, բայց մենք շատ անգամ չենք ճանչցած նոցա արժանիքներ և նոցանից օգուտներ քաղելու տեղ՝ վնասներ քաղած ենք։ Ո՜րքան անզգուշութիւն... Արդարև կը վհատէին...։ Եթէ հարցնեն այս մասին, ինչ կուտանք պատասխան, կամ օգուտներ ուրտեղ լինելը կցերենք սովորել, մանաւանդ մեր դպրոցներէն նոր ելողներ. որք դեռ կեանքի մէջ մանուկ, բայց անձնանուէր փորձառուների՜ և աշխատողների գործունէութիւն կը

փորձէին և շուտով կը գրէին կ. Պոլսոյ կարճատես մի երկու թուօ խմբագիրներին հրապարակելու, այս ինչ և այն ինչ արժանաւորի արժանիք հայհոյել մի մասնաւոր յանցանքի կամ պակասութեան համար։ Թողունք այս տեսակ հետեանքների վերայ չմտածողների անզգոյշ գործերը և հարցնեմք իրարու, մեծերէն մինչև երիտասարդներիս. թէ ուր են մեր հարստութիւն, փառաւորութիւն, կամ ինչով կերաշխաւորէինք իրարմէն յափշտակածներին. հարցնեմք աւելի այն աղաներէն, որոնց հարստութեան գործիք դարձած էին մեր կարօտ եղբայրները՝ առաւելապէս ամէն բանով հարստահարեալ գեղացիքը։ Անշուշտ պատասխանը ոչ մնաց է։ Մեղաւոր. գլխաւորապէս մենք ենք, զի ինչպէս կարող ենք Թուրքի, քուրդի և այլ օտարներին մեղաւոր համարել. քանի որ աշխարհի օրէնքն է, ամէնք իրանց շահերի համար ծառայեցնել և զոհել ուրշի իրաւունքն իր և իւրեանց ազգային գոյութիւն փառաւորելուն։ Չէ եղբարք, պարոններ, աղաներ, և էֆէնտիներ, որքա չեն ապահով շահի և հաստատ կայքի միջոցները, նոյն և չէ կարելի սորանով մենք մեր երազելի յաջողութիւններին կենդանութիւն. տալու կարող լինեմք և մեզ մէջ նորեկ հեռաւոր եղբայրներով մեր խեղճ անապահով դրութիւնը մի անգամ կայանքի տեսնել և ոչ էլ Հայրենեաց բախտաւորութիւն ..... Այլ զգուշանամք բոլորովին օրեկան կամ անձնաւորութեան խնդիրներէն և հարցնեմք իրարու եղբայրական սիրոյ համոզմամբ մեր փրկութեան միակ ճար և կտրուկ ճանապարհ։ Հաստատ մնամք այս փրկութեան ճարի ջանքերին, դաշն դնեմք մեր մէջ եկող հիւրերու ամէն բարի ձեռնարկութեան նեցուկ և անձնանուէր առաջնորդող լինել, որով վստահ կը լինիմք ազգային պարզերես լինելու և համարձակ սիրտ կունենամք հեռաւոր արենակիցներին հիւրընկալելու։ Ապա ոտքի կանգնեմք այն փրկութեան ճանապարհի վերայ, ուխտեմք անդրժելի եղբայրական սիրոյ և Հայկական հայրենիքի Աստուծոյն, որ Հայրենեաց ազատութեան եղբայրական միութեան ոչ ինչ չխնայեմք։ Երբ Հայրենիքի և եղբայրութեան ուխտեալներն եմք, թոթափենք



դարերի սարկական թմրութիւն և աչքի տակ ունենամք մեր անցեալ և ներկայ ունեցածները, խլուածները, կորսնցուցածները. կամ թէ կարելի՞ է նորէն կորուստներ և զոհեր ունենամք իզուր, եթէ կարելի է, մենք կամաւ և սիրով զոհենք Հայրենիքի և եղբայրասիրութեան համար մեր ամէն ինչ. սուր ի ձեռին վահան Հայրենիքի և մեր ամէն թշնամու երեսին տանք, լաւ համարեմք մի անգամ մեռանել և մեր նախնիքներու դիւցազնութեան շարքով պատերազմի դաշտում, այսպիսով կարող ենք ասել՝ թէ կը փութանք Հայրենեաց շահերի միջոցներին հսկող լինել և ոչ թէ լոկ խօսքերով։ Ինարկ է մեզ հետ կը լինին հեռաւոր եղբայրներ Հայրենիքի և եղբայրասիրական գործերու մէջ։ Հայաստան չդարձողները ինչ որ կարող կը լինին անելու իրենց պարագաների մէջ կը յուսանք որ այն կանեն. իսկ դարձողներ արդէն մեզ հետ կը լինին ամէն տեղ և ամէն գործերի մէջ։ Սոքա թող բարեհաճեն վերադառնալու և մենք էլ առաջ անցնիմք քաղաքացի, գեղացի, մեծ, փոքր, նոցա հիւրընկալելու, պատուասիրելու, նոյն իսկ առժամանակ մի մեր տների մէջ մեզ հետ բնակեցնելու, իսկ գործեր ունենալու միջոցներ արդէն Հայրենեաց մէջի ընկերութիւնները կը կարգաւորեն իւրաքանչիւր գործաւորին կամ գործողներին իրենց պահանջին համեմատ գործերի վերայ, Արդէն Հայաստանցիքս պատրաստ կը լինիմք հիւրերի մասին և հիւրերն էլ կը թողուն օտարն օտարին, կը բեռնաւորուին ամէն նոր արհեստներով, որք լուսաւոր աշխարհի մէջ փորձերով կատարելագործուած են և կը շարունակեն Հայաստան գալու։ Ոմանք արեւելեան ճանապարհով Հնդկաստանից և Պարսից խոր բընակուողներէն կը հասնին Տիգրիսի և Եփրատի ափերը, իսկ ոմանք արեւմտեան ճանապարհով Միջերկրական ծովի Հայոց ծոցով Կիլիկիոյ ցամաք կամ թէ Սև ծովով Պոնտոսի ափերը, և այլ զանազան կողմերէն եկողներ, որոնք Հայաստանի ամէն տեղեր կը հասնին և կը տարածուին։

Հիւրերի գործերը կարգաւորելու համար՝ նախ և առաջ ամէն կողմերի երկրագործական ընկերութիւնների կեդրոններ իրենց ճիւղերով՝ թէ քաղաքացի և թէ գեղացի պատրաստ կը-

վնելն գտնելու և զատելու եկողների երկրագործ դաս, սոցա տաք երկրի բերքեր մշակողին՝ տաք երկիր ցուցանել, բարեխառն տեղեր մշակողներին բարեխառն, անտառագործին և այգեգործին իրենց տեղերը և այլն, բայց նորեկների բարոյական և նիւթական բնոյթը տեղացի հայերի ամէն գործերի հետ կը խառնեն, տեղացին էլ սիրով և ծիր ջանքերով ձեռք ձեռքի տուած կրթութեան արդիւնաւորելու. սոցա իրարու հետ անխռով ապրելու կամ շահել և շահուելու եղանակները աչքի տակ ունենալով հսկելու է ամէն կերպով, թէ մշակութիւն արդիւնաւորող և թէ կատարելութեան հասցնող և այլ միջոցների վերայ.....:

Յետոյ արհեստասիրաց ընկերութիւն՝ արհեստաւորներ զատելով իւրաքանչիւր արհեստի տեսակ գործաւորներ իւրեանց սեռին խառնել տեղացիների հետ, կատարելագործուած վարպետէն մինչև նորուս աշակերտն: Սոցա մէջ իրարու դերութիւնները լրացնելու և ջանքեր աւելացնելու քաջալեր միջոցներ տնօրինել: Ամէն արհեստի օգուտ իւր նշանակութեամբ մեծ է, բայց երկաթագործութիւն ամենից նախադաս է, որի արդիւնքն ոչ միայն արհեստաւորաց կօգնէ՝ այլ և ուժ կուտայ մարդկային սեռին իւր շատ գործերու մէջ՝ մինչև անգամ քաղաքակրթութեան մէջ մրցելու և մարդկային արժանեաց մրցանակ ընդունելու.....:

Հետևապէս վաճառականների և փողերի շահող ընկերութիւնները խառնեն և խառնուին իրարու հետ՝ թէ վաճառքներով և թէ փողերով, կապեն ապահովացնող պայմաններ շահեր իրարմէն անբաժան մնալու միջոցներով: Յուսով եմք՝ որ շահասիրութիւն կը սորվեցնէ սոցա իրենց շահերի յաջողութիւն երկրագործների և արհեստաւորների յառաջադիմութեան մէջ փնտռել, որով և չեն խնայեր նոցա առաջ տարող բոլոր միջոցներին իրենց ջանք, նոյն և հանքային արհեստի մշակութեան համար, նաև ուսումնասիրաց ընկերութիւնների գործեր ևս խառնեմք ժողովրդական ամէն աստիճանի կեանքի մէջ գործող ընկերութիւններին, թէ տեղացի և թէ նորեկներին. որ նոքա լաւ հասկանան և գիտնան որ իրենց ունեցած տառական, բառական



սահմանափակ ուսածից ոչինչ գիտցեր են, քանի չեն իմաստասիրած ժողովրդեան գործերի միջոցներ և նորա գաղտնիք կամ պահանջները: Խիղճը կրթիչ, վարժիչ, ուսումնասէր, վարդապետ, քահանան և այլ ազգային եղբայրասիրութիւն զօրացնող խումբեր բոլոր իրանց պարագաներ և հարստութիւնների կամ յարմարութիւնների միջոցներ կը սարքեն իրարու կապելով և անլքանելի աշխատութեամբ կը հետաքրքրուին և կը հետաքրքրեն անտարբերներին հայրենեաց շահերի յաջողութեանը: Այս տեսակ պարտքեր դեռ հետաքրքրել և ազգին ուխտեալ լինել, կերևի որ չեն յիշում Էջմիածնայ միաբանութիւն մեծէն մինչև փոքրը........ Բայց ժողովուրդ կը յիշէ.....:

Ապա մեր հայրենասիրական զգացմունքով լի մայրեր, վարժուհիք և քոյրերը միթէ ետ պիտի մնան իրենց ինկած պարտքերի մէջ, թէ նոր եկողներ և թէ տեղացի, որք իրար զգուելով կառաջնորդեն յաջողութեան և օգնող կը լինեն իրարու միութեան և անտարբերներին կը զարթեցնեն Հայկական սեռի կանանց փառքի և պատւոյ ապահովութեան հասնելու համար, որին աշխատութիւն և գործ է հարկաւոր....:

Երբ հեռաւորներից դարձողներ կը լեցուին Հայաստան և տեղական հայերով ձեռք ձեռքի տուած կը պարապեն արհեստով, երկրագործութեամբ, հանքային մշակութեամբ, այլ և ազգային կենսական զօրութեան ուժ տուող խումբեր և մինչև անգամ կանանց խումբեր կսկսեն գործելու. ալ այնուհետև Պօլսոյ 80 հազարէն աւելի Հայաստանցի պանդուխտներ կը դառնեն այն ժանդոտած տեղերը, ոչ երբէք: Բայց սոքա որպէս պիտի դառնան: Ինչպէս սովոր է Հայաստանի հայերս մեր ցաւերի համամիշտ ազգային իշխանութեան դիմել, և կը դիմեն ազգախնամ ժողովին կամ անձնանուէր Պատրիարքին, կամ թէ այլ տեղեր՝ խնդրելու կոնգրէսի վճռոյ գործադրութիւն և Սուլթան Համիդի արած խոստումն. որ 77 ին Ամենապատիւ Ներսէս Պատրիարքին արած է, այսինքն քաղել մեր հաւատարմութեան պտուղ և պատերազմի մէջ եղած վնասների վարձատրութիւն:

Մեր խնդիրքի ընդունելութիւն գտնել կամ խոստումների գործադրութիւն այն կը լինի, երբ Հայաստան կունենայ ինքնա-

կառավար օրէնք, դատարան և Հայ զինուորների գունդեր, մեզ է ազատացնող սոքա են և ոչ այլ ինչ.....: Սոքա այլ ևս վախով չենք ուզեր՝ այլ ազատ. ալ ինչերիս համար պիտի վախենք, ինչպէս որ է, այո կամ ոչ պատասխանէն յետոյ կը դառնան Հայրենիք:

Պանդուխտներն ալ եկան, բայց դարձեալ կասեմ թէ. որքան հնար է մեր Հայրենիքի այլ ցեղերին ևս միացնենք մեզ հետ, թէպէտ օտարի շահ օտար է, այնու ամենայնիւ ազգերի շահ միմեանց մօտ է, իսկ առաւելութիւն ձեռք բերելու յաջողութեան միջոցը հանճարն է. և ինչպէս չէ, քանի որ ուրիշ շահեր մեզանից կապուած են, մենք ալ ունենալու ենք այն՝ որպէս տիրող ազգերի ուղղութիւնն է: Այս մասին, ինչպէս կը սորվեցնեն փորձեր, մեր անլքանելի միջոց ընդհանուր միութեան. մէջ պիտի փնտռենք և դժուարութեանց յաղթելու բոլոր յոյսը մեր ուժեր զօրացնող պարագաներից պիտի տեսնենք, բայց մինչեւ տաճկահայաստանի հայերիս ցրուած կամ բաժանուած ազգիմը ընդհանուր միութիւն և զօրաւոր ուժ կազմակերպելու համար առանց մեծամեծ արգելքի անկարելի է: Արգելքներ այնքան ներգործող չեն լիներ. եթէ գործերի գլուխ անցնողներ գործելու հըմուտ անձեր են և գլխեցած թէ արգելք կամ յաջողութիւն ինչեր են. պահանջում, այո. ոչ ինչ՞են՝ եթէ ամէն գործի գլուխ անցնողներ ժամանակ և պարագաներ գնահատել գիտցող են և նախորդ գործողների պակասորդը լրացնելուն տեղը ինքնացուցութեան երեւոյթներով չեն սկսեր, նոյնպէս նոր գործի հեղինակողները ուրիշի աշխատութիւն չեն ոտնակոխեր, այլ Հայրենեաց և եղբայրական նպատակի պահանջներ իր յաջողութեան հասցնելու համար կընտրեն նուիրական աշխատութիւն և զգուշ կը լինեն ամէն տեսակ արգելքի ծագումէն, և եթէ գործի գլուխ գտնուողներէն այս է պահանջւում, ապա չգործողներէն կամ հասարակութենէն ինչ, անշուշտ ընդհանուր միութիւն երաշխաւորող միջոցների ուղիղ գործադրութիւն, կարգապահութիւն, այսինքն, գործողներէն անժամանակ հաշիւ չպահանջել, արժանաւորին և փորձուածին վստահել ու նորանց



տալ գործը, գործողների արդեանց չափ նոքա յարգել, ամէն անձի արժանաւորութիւնից օգուտ քաղել բարոյականապէս, շահել և շահուել անխտիր, եսականութիւն, որ ամէն բանի ոտնակոխողն է զգուշանամք ամէն տեղ և ամէն գործերի մէջ զրգիռ չծնեցնելուն համար, միմեանց պակասութիւն լեցնենք. մինչև անհատական շահերը միութեամբ պաշտպանենք, կարճատեսների պէս միմեանց ձեռքէն օգուտներ չխլենք: Որով թէ Հայրենեաց շահեր և թէ մեր անձնական շահերը ամբողջացած ապահովութիւն կը գտնեն և անբեկանելի զօրութիւն, որի աջակցութեամբ կը հասնենք անդորր օրերի: Երանելի էր որ այս տեսակէտից փնտռէինք մեր ամէնիս անձնական շահ և ամէն ճշմարիտ հայու գործի արդիւնք այս տեսակէտից պահանջուէր...: Ցիշեալ կազմակերպութիւն մեր քաղաքագէտներին հրապարակ կիջեցնէ՝ որք աներկիւղ կըստեղծեն իրենց փորձուած հմտութեամբ գործելու ծրագիրը և զայն Հայաստանի խմբուած ընկերութիւնների խնամքով կը տարածեն ամէն տեղ՝ ի գործ դնելու յաջող ճանապարհով: Եւ եթէ այս յաջողութեան առաջ պատահած գտնենք օտարներից լեցուած ծակծըկող քարերը, կը փշրենք փոշիացնելու չափ, մեր եղբայրասիրական զուգակցութեամբ և տոկունութեան քրտինքով կըշաղաղենք զասոնք ի կաւ, և եթէ պէտք պահանջի արիւնով ևս խառնենք, զի արիւնով շաղաղուած կաւն շուտ կը եռացնէ և աւելի ամրութեան մէջ կը պահէ: Սորա համար առնենք մեր պապերի ժանգոտած բրիչներ, երկաթներ, պահ, փայտատն մեր լքուած ձեռքը, բանանք ճանապարհ որպէս ճարտարապետներն նախագծած են, լեցնենք խոր ձորեր, պնդացնենք շատ ամուր խորասոյզ անող տիղմերը, պատառենք մեր դէմ պատահած յուսահատութիւն պատճառող և հաստատուն յաջողութեան արգելք դնող լեռները, ճանապարհներէն յետոյ փնտռենք շինութեան տեղ. հաստատ և անառիկն ընտրենք, մեր ձեռին ունեցած փայտատ և բահ սուր կը քանդեն լեցուած հողեր և սըռսռացող աւազներ, նոյն և անկանոն ինկած քարեր յաջող դուրս կուտանք տեղէն և կը հասնենք մայր հողին և նախկին ապառաժին. անկասկած շինութեան տեղն ալ պիտի օգնի՝ քանի

որ մենք մեզ օգնելու համար ոչինչ չենք խնայում։ Օգնեմք և մեր թոյլ կողմին հսկենք, որ չլինի զանազան կողմերէն քամիներ ներգործեն մեր ներքին ուժերի վրայ և ապագայի արևելեան խնդրոյ լուծման ժամանակ ևս ոտնակոխուինք, թէ մենք, թէ Հայրենիք։ Այս խնդրոյ մէջ մեր մասին ծածկուած թշուառութեան մի անդամից վերջ տալու համար տեղական պարագաները մեզ խիստ արթնութիւն կը սորվեցնեն, նոյն և Եւրոպիոյ մեզ վրայ եղած հայացքները։

---

Մենք մեր գործերի հսկողութեան հիմն յիշեալ եղանակներով կը տեսնեմք, թէ ապագայ արևելեան խնդրոյն պատրաստ լինելու մասին, թէ օրեկան կտոր հացի և թէ ուսումնարանաց յաջողութեան մասին, որովհետև մարդիկ բնականապէս միշտ հացի ետև կըգնան և հաց ունեցողներ կըզգան՝ պատուի և արժանաւորութեան յարգը կամ ուսանելու պէտքը։ Ուսումնարանների յարատևութեան միջոց հաց տուող գործերի շարունակութեան մէջ ապահով կըտեսնեմք։ Եթէ թուլամորթութեան տեղիք չթողնեմք մեր վրայ, շատ միջոց ունեմք ձեռունիս մեր ժողովրդեան ապագայ հացի ճանապարհը ուրիշին չթողնելու, ուշ չէ եթէ տատասէ մտնեմք Հայաստան և քիչմը աւելի շուտ արևմուտքէն եկողներից, նոքա ինչ պիտի անեն առանց մեզ, անշուշտ նոցա ամէն գործակատարներ Եւրոպայէն գալու չեն, քանի մեր Հայրենիքն է՝ մեզ շատ պէտք ունեն։ Եկողներից մենք երկու գլխաւոր պէտք ունեմք հրաշխաւորելու, այն է մեր Հայրենիք և մեր գործերու ապահովութիւն։ Նոքա պաշտպանութիւն գտնելու համար միթէ մարդասէր Եւրոպան Հայ ազգը չպիտի պաշտպանէ մարդկային ազգի անդամակցութենէն չզրկուելու համար։ Երանի էր եթէ Թուրքիան օգտուած լինէր պարագաներէն և համոզուած՝ թէ մեր ազգային շահեր իւր շահերի հետ ինչպէս կապուած էին մեր անխարդախ հաւատարմութեամբ մինչ օրս, նոյնպէս ժամանակի փոփոխութեան հետ՝ փոփոխէր մեր հպատակութեան եղանակն և չթողնէր օտարներին միջամտելու։ Հարկաւ հասկանալի է ուրիշի միջամտութեան հետևանք, կամ ով պիտի չգիտնայ ուրիշի շահասիրու-



թեան դիմելու արդիւնքը։ Մենք երանութիւն կասեմք երկուստեք՝ եթէ Օսմանեան արքունիք ժամանակի պահանջներին համեմատ ընդունէր Հայաստանի վերանորոգութեան խնդիրը և փութար բաւականացնող լինել Հայերիս։ Եթէ Օսմանեան նախատեսներ և նախարարական տեսչութիւն աչքի առաջ ունենային մեր այսքան համբերութիւն և օսմանեան կառավարութենէն չբաժնուելու ցանկութիւն և հետաքրքրէին իրենց շահերի առաւելութիւն որպէս կապուած է Հայերիս ինքնակառավարութեան հետը, կամ իւր երկրի մի մասի ապահովութիւն, որպէս կարելի է իւրեան համար ապահովացնող լինել Հայ ազգը։

Հայաստանի շահերով հետաքրքրուող Անգլիան, ինչպէս յայտնի է նախ քան Կիպրոս կղզու դաշնագրութիւնն՝ արդէն պահանջում էր իւր շահերին հասնելու համար Հայաստանի ինքնավարութիւն լինելը ըստ եւրոպական պետութիւնների ցանկութեան, իսկ յետ դաշանց՝ կերևի որ բոլորովին իր վերապահեց Հայաստանի վերանորոգութիւն, բայց դեռ ոչ ինչ չունի արած։ Ինչպէս որ է, մեր կատարեալ ցանկութիւն մենք բոլոր եւրոպական պետութեանց համաձայն որոշման վճռից կսպասեմք։ Այս անգամ եթէ փոքր հետամուտ եղաւ Եւրոպան Հայաստանի մասին, պատճառ յայտնի է, որ արևելեան հարց դեռ որոշ կերպարանքի չհասաւ, որ վերջացած լինէր արևելեան ազգաց վիճակի բարւոքումն, այլ նոր փաթոյթի ձևակերպուեցաւ՝ քանի մը պետութիւնների շահեր իրար խառնուելով, որոյ պայթումը թէ մօտագայ չենք կարող ասել, բայց ապագային անշուշտ է։ Ուրեմն այս օրից սկսեալ պատրաստուինք այն օրուան և ինչ որ պէտքն է մեր առաջն ունենանք, անցեալն հետազօտենք և նորանից օգուտ քաղենք, հեղինակենք ծրագիրներ և իւրաքանչիւրս մեր ինկածը բարեխղճութեամբ կատարենք մեր Հայրենիքի համար, որոյ մէջ միայն ենք գտնում մեր ամենևին օգուտն ու երջանկութիւն, փառքն ու պատիւը։

ԽՕՍՔԻ ԱՐԺԱՆԻՔԸ ԳՈՐԾԵԼ ԳԻՏՑՈՂԻՆ Է
ԻՍԿ ՄՐՑԱՆԱԿՆ ՈՒ ՊՍԱԿԸ ԱՐԴԻՒՆԱՒՈՐՈՂԻՆ։

# ՊԱՏՈՒԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂ

Առ. հասարակ աշխատութիւն մը պատճառ կամ նպատակ կունենայ՝ այս տետրակիս նպատակ արդէն պարզ յայտնի եղաւ ընթերցողին։ Թէպէտ ազգային գործերի մէջ այս չէր իմ շրջանս ինչպէս գրականագիտիմը, բայց ինչ կրնայի անել՝ որ իմ խղճիս առաջ չդատապարտուէի, երբ զգացումս և տեսութիւնս կը ստիպէին ինձ, իմ կարծիքներս հետաքրքիր երիտասարդութեան տալու։

Ուստի ընթերցողների ներողամտութեան վստահանալով համարձակեցի ձեռնարկել այս առաջին աշխատութիւնս՝ որնոր պատիւ ունիմ Հայ հասարակութեան նուիրելու, թէև ճիշտ ժամանակն բաւականին անցաւ։

Ի դէպ. սորա լոյս գալուն օգնող Բաքուայ երիտասարդութեան խորին յարգանքս կը յայտնեմ և կը հետեցնեմ ասել. Պատուական Եղբայրասէրներ՝ դուք, որ չխնայեցիք ոչինչ այս առթիւ, ես էլ կը նշանակեմ սորա բոլոր եկամուտ իմ Հայրենեաց Վան քաղաքի Արծրունեանց ընկերութեան օգտին, որոյ օրագրական աշխատութիւն թերևս սորանով ընթերցողաց դիւրամատչելի լինի և ընկերութեան նպատակին օգնութիւն մը արած։

1878 Օգոստոսի 2։

ՆԱԶԱՐԵԹ
ԱՌԱՒԵՂԵԱՆՑ

ՀՀ Ազգային գրադարան
NL0255053